

# ՕՊԵՐԱ

# № 126

ԻՐԱՎԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ (ՀԱՆԴԵՍ) 2020թ. (06)

ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՊԱՐՊԱԲԱՆՈՒՄ  
ՍԿՐԻՖ ՄԻՆՉԵՎ ՎԵՐԳ  
ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՀՄՍ-ՆԵՐՈՒՄ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ (ՎԱԽԱՌԻ ՄԵԼԵՑԵՐ)  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐԺՈՒՅԹԱՆԵՐ



## ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԳՈՐԾՔ» ՍՊԸ-Ի ՏՆօՐԵԼ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՃՐՈՒ ԿԱԶՄԸ**



ԱՐՄԵՆ  
ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԿ  
ՍԱՐԳՍՅԱՆ



ԱՇՈՏ  
ՍԱՐԿՈՍՅԱՆ



ՎԱՐԴԱՆ  
ԲՈՆԱՍՉՅԱՆ



ԷՂՈՒԱՐԴ  
ԹՈՒՄԱՅՅԱՆ



ՄՈՒՇԵՂ  
ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աշխատանքի իրավունքի  
պաշտպանի (հաշտարարի) տնտ. ֆակ. դեկան,  
գրասենյակի ղեկավար  
գլխավոր խմբագիր

ԵՊՀ  
տնտեսագիտության  
դոկտոր, պրոֆեսոր

Տնտեսագիտության  
դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՄԿ-ի նախագահ  
Հայաստանի Ամերիկյան  
համալսարանի դասախոս,  
իրավաբանական  
գիտությունների  
բեկնածու

### «ԳՈՐԾՔ»-Ի ՊԱՏՎԱԿՈՐ ԱՆԴԱՌԵՐԸ



ԱՐՏԵՄ ՍԱՎՏՐՅԱՆ  
ՀՀ աշխատանքի և  
սոցիալական հարցերի  
նախկին նախարար  
(2012-2018թ.)



ՄԻՒԹՅԱՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ  
ՀՀ աշխատանքի և  
սոցիալական հարցերի  
նախկին նախարար  
(2009-2010թ.)



ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ  
ՀՀ աշխատանքի և  
սոցիալական հարցերի  
նախկին նախարար  
(2008-2009թ.)



ԱՐԱՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
ՀՀ սոցիալական  
ապահովության նախկին  
նախարար  
(1999-2003թ.  
ընդմիջումներով)



ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՉՅԱՆ  
Առողջապահության  
և սոցիալական  
ապահովության նախկին  
նախարար  
(2000թ.)



ԳԱԳԻԿ ԵԳԱՆՅԱՆ  
ՀՀ սոցիալական  
ապահովության նախկին  
նախարար  
(1998-1999թ.)



ՐԱՍՈՒԵ ՐԱԿՈԲՅԱՆ  
ՀՀ սոցիալական  
ապահովության նախկին  
նախարար  
(1996-1998թ.)



ԱՇՈՏ ԵՍԱՅԱՆ  
ՀՀ աշխատանքի և  
սոցիալական հարցերի  
նախկին նախարար  
(1990-1995թ.)



ՆԱՐԻՆԵ ԲՈԼԱՅՅԱՆ  
Հայաստանի սոցիալական  
ապահովության նախկին  
նախարար  
(1985-1990թ.)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

### 1.1. ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐ

- Փոփոխություններ ՀՀ հարկային օրենսգրքում (պարզաբանումով) ----- 4

### 1.2. ՀՀ ԿԱՌԱՎՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

- Հաստատվել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեղոքացման քաներորդ միջոցառումը և դրա շրջանակներում աջակցության տրամադրման կարգը ----- 11
- Հաստատվել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեղոքացման քանեկերորդ միջոցառումը ----- 14

### 1.3. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅԻՆՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ

- Սահմանվել են ՊԱՐՀԱԾ ԶԵՂՔԻ ԶԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹԻ ՀԱՆՎԱՐԿՄԱՆ ԿԱՌՈՒՄՆԵՐԸ ----- 17
- Փոփոխություններ և լրացումներ են կատարվել գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգում ----- 19

### 1.4.ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ (ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄշԱԿՈՒԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ)

- Հաստատվել է դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգը ----- 23
- Փոփոխություն է կատարվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգում ----- 28

## II. ՀԱՅՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾ

### 2.1. ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ ՊԱՐՀԱԲԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐՈՎ՝ ՍԿՐՖԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ (հոդվածներ 1-107) ----- 34

### 2.2. Նորություններ ՖՀՍՍ-ներում

- ՖՀՍՍ-16 Վարձակալություն Գլուխ 9. ----- 47

## III. ԿԱՂՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾ

Պաշտոններն ըստ աշխատանքի նկարագրության և աշխատանքի անվտանգության.

Վաճառքի մենեջերի աշխատանքի նկարագրությունը և անվտանգության հրահանգը ----- 54

## IV. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹՆԵՐ

### 4.1. «2020թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի երրորդ փուլը և երկրորդ փուլի արդյունքները ----- 61

### 4.2. «2020թ. լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի երրորդ փուլը և երկրորդ փուլի արդյունքները ----- 66

Գրանցված է 11.02.2005թ.,  
Պետական գրանցման  
վկայական՝ N 03Ա067699,  
տրված՝ 14.02.2005թ.  
Տպագրում է 2010թ.-ից  
Տպագրանակը՝ 900  
Գինը՝ պայմանագրային  
Տպագրության է տրվել 15.07.2020թ.

Գովազդային նյութերի բովանդակության  
համար խմբագրությունը  
պատասխանատվություն չի կրում:  
Լրատվական գործունեություն  
իրականացնող՝ «Գործք» ՍՊԸ  
Տպագրվել է՝ «ԱՍՏԵՆՈՐ» տպարանում  
Զնագործ՝ Լևոն Ամիրյան, Ռուզաննա Շավարշյան

Խմբագրության հասցեն՝  
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք  
հեռ.՝ (010) 56-72-93  
www.gortsq.am, press@gortsq.am





## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

#### Տեղեկանք

- ✓ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հարկային օրենսգրքում (այսուհետ՝ ՀՕ 165-Ն Օրենսգրքը) փոփոխություններ են կատարվել 2020 թվականի հունիսի 16-ին, որը ստորագրվել է 2020 թվականի հունիսի 17-ին: Հաշվառման համարը՝ ՀՕ-302-Ն օրենք:
- ✓ ՀՕ 165-Ն Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 38 անգամ:
- ✓ 2020 թվականի հունիսի 16-ին ընդունված ՀՕ-302-Ն օրենքով փոփոխություններ են կատարվել ՀՕ 165-Ն Օրենսգրքի 135-րդ, 451-րդ հոդվածներում:
- ✓ 2020 թվականի հունիսի 16-ին ընդունված ՀՕ-302-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 18-ից:
- ✓ ՀՕ 165-Ն Օրենսգրքում կատարված փոփոխությունների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են իին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումները՝ գունավորված:

Այսպես՝

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԻՐԸ

ՄԱՍ 2

ՀԱՏՈՒԿ ՍԱՍ

ԲԱԺԻՆ 6

ՇԱՀՈՒԹԱՅԱՐԿԸ

ԳԼՈՒԽ 25

ՇԱՀՈՒԹԱՅԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՎճԱՐՄԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ՀԱՇՎԻՆ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 135. Շահութահարկի կանխավճարները

1. Ոեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը պարտավոր են ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ, կատարել շահութահարկի կանխավճարներ (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերի՝ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսի չափով, եթե տվյալ հարկ վճարողը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով չի ընտրել շահութահարկի կանխավճարների կատարման՝ նույն մասով սահմանված այլընտրանքային եղանակը «տոկոսով հաշվարկվող գումարի և նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսով հաշվարկվող գումարի նվազագույնի չափով»:

2. Շահութահարկի կանխավճարների հաշվարկման նպատակով սույն հոդվածի 1-ին մասով՝ սահմանված՝ նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի մեջ չեն ներառվում (այդ գումարից նվազեցվում են):

1) Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հատուկ հարկային համակարգերի շրջանակներում հաշվարկ-վող շրջանառության հարկի գումարում առկա՝ շահութահարկի հաշվարկային մասնաբաժինները, ինչպես նաև հարկման հատուկ համակարգերի շրջանակներում հաշվարկվող շահութահարկի գումարները:

2) շահութահարկի այն գումարները, որոնց վճարումից շահութահարկ վճարողներն ազատված են Օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

3) շահութահարկի այն գումարները, որոնք նվազեցվում են Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված դեպքերում:

4) Օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված՝ օտարերկրյա պետություններում գանձված շահութահարկի կամ շահույթից հաշվարկվող այլ հարկի գումարները:

5) նախորդ հարկային տարվա ընթացքում հարկային մարմնի կողմից ստուգմամբ կամ վերստուգմամբ հայտնաբերված շահութահարկի գումարները (անկախ այն հանգամանքից, թե որ հարկային տարիներին են դրանք վերաբերում):

**«2. Շահութահարկի կանխավճարների հաշվարկման նպատակով՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝»**

1) նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի մեջ չեն ներառվում (այդ գումարից նվազեցվում են):

ա. Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված՝ հատուկ հարկային համակարգերի շրջանակներում հաշվարկվող շրջանառության հարկի գումարում առկա՝ շահութահարկի հաշվարկային մասնաբաժինները, ինչպես նաև հարկման հատուկ համակարգերի շրջանակներում հաշվարկվող շահութահարկի գումարները,

բ. շահութահարկի այն գումարները, որոնց վճարումից շահութահարկ վճարողներն ազատված են Օրենսգրքի 126-րդ հոդվածով սահմանված դեպքերում,

գ. շահութահարկի այն գումարները, որոնք նվազեցվում են Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված դեպքերում,

դ. մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեգիստրացված շահութահարկ վճարողի՝ մշտական հաստատությանը չվերագրվող եկամուտների մասով՝ Օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան հաշվարկված շահութահարկի գումարները,

ե. Օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված՝ օտարերկրյա պետություններում գանձված շահութահարկի կամ շահույթից հաշվարկվող այլ հարկի գումարները,

զ. նախորդ հարկային տարվա ընթացքում հարկային մարմնի կողմից ստուգմամբ կամ վերստուգմամբ հայտնաբերված շահութահարկի գումարները (անկախ այն հանգամանքից, թե որ հարկային տարիներին են դրանք վերաբերում)։

2) նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների մեծությունը որոշվում է նախորդ եռամսյակում ներառված ամիսների համար՝ մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ շահութահարկի կանխավճարի կատարման վերջնաժամկետը հարկային մարմին ներկայացված՝ Օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՆ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում (այդ թվում՝ ծշտված) արտացոլված՝ ԱԱՆ-ով հարկվող և ԱԱՆ-ից ազատված գործարքների հարկման բազայի հանրագումարի չափով։ Սույն կետի կիրառության իմաստով՝

ա. սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ շահութահարկի կանխավճարի կատարման վերջնաժամկետից հետո հարկային մարմին ներկայացված՝ տվյալ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների ավելացվող կամ պակասեցվող գումարները՝ պայմանա-

Վորված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի հանրագումարի փոփոխությամբ (այդ թվում՝ եռամսյակի որևէ հաշվետու ամսվա համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի կամ ծշտված հաշվարկի ներկայացման դեպքում) հաշվի չեն առնվում շահութահարկի կանխավճարի մեծության հաշվարկման համար,

թ. հարկային մարմնի իրականացրած ստուգման կամ վերստուգման արդյունքներով նախորդ եռամսյակում ներառված ամիսների համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի վերահաշվարկներ չեն կատարվում»:

2.1 Նախորդ հարկային տարվա համար ներկայացված շահութահարկի (այդ թվում՝ ծշտված) հաշվարկը հիմք է հանդիսանում այդ հաշվարկը ներկայացնելու օրվան հաջորդող առաջիկա կանխավճարի մեծության հաշվարկման համար, եթե հաշվարկը ներկայացվել է մինչև տվյալ հարկային տարվա վերջին կանխավճարի կատարման վերջնաժամկետը:

3. Մինչև նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի հաշվարկումը (մինչև նախորդ հարկային տարվա համար շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելը) սույն հոդվածի 1-ին մասուն նշված հարկ վճարողները շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում են նախորդ հարկային տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի: Նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարը հաշվարկելուց (շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց) հետո սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով առաջին անգամ կանխավճարի կատարման ժամանակ կատարվում է մինչև շահութահարկի հաշվարկի ներկայացումը՝ տվյալ հարկային տարվա ընթացքում, կատարված կանխավճարների գումարների ծշտում՝ հարկային տարվա սկզբից աճող հանրագումարով և սույն հոդվածի 1-ին մասուն նշված չափերով:

«3. Մինչև նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի հաշվարկումը (մինչև նախորդ հարկային տարվա համար շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելը) շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարելու համար նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարի փոխարեն ընդունվում է վերջին հաշվետու տարվա համար ներկայացված շահութահարկի հաշվարկով (այդ թվում՝ ծշտված) արտացոլված շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարը»:

4. Աեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով՝ վայաստանի նախապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը ընթացիկ հարկային տարվա յուրաքանչյուր եռամսյակի համար շահութահարկի կանխավճարները կատարում են նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների երկու տոկոսի չափով, եթե մինչև ընթացիկ հարկային տարվա մարտի 20-ը ներառյալ հարկային մարմին են ներկայացրել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի ընտրության վերաբերյալ: Սույն հոդվածի կիրառության իմաստով՝ նախորդ եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների մեծությունը՝ որոշվում է նախորդ եռամսյակում ներառված ամսների համար հարկային մարմին ներկայացված՝ Օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի հանրագումարի չափով: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) եռամսյակի ընթացքում ապրանքների մատակարարումից, աշխատանքների կատարումից և (կամ) ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտների ավելացվող կամ պակասեցվող գումարները՝ պայմանավորված՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի հանրագումարի փոփոխությամբ (այդ թվում՝ եռամսյակի որևէ հաշվետու ամսվա համար ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի կամ ծշտված հաշվարկի ներկայացման դեպքում) հիմք են հանդիսանում այդ հաշվարկի ներկայացման կամ ծշտված հաշվարկի ներկայացման օրվան հաջորդող առաջիկա կանխավճարի մեծության հաշվարկման համար:

2) հարկային մարմնի իրականացրած ստուգման կամ վերստուգման արդյունքներով նախորդ եռամսյակում ներառված ամսների համար հարկային մարմին ներկայացվող՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնա-

Կանհաշվարկներում արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ից ազատված գործարքների հարկման բազայի վերահաշվարկներ չեն կատարվում:

### (մասն ուժը կողցրել է 16.06.20 թ0-302-Ն)

5. Նարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կամ որպես նոտար նշանակված հարկ վճարողները՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա եռամսյակների համար, իսկ նախորդ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված, ինչպես նաև ընթացիկ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարված հարկ վճարողները ընթացիկ հարկային տարվա եռամսյակների համար շահութափարկի կանխավճարները չեն կատարում, եթե չեն ընտրել շահութափարկի կանխավճարների կատարման՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված այլ ընտրանքային եղանակը: Եթե սույն մասում նշված հարկ վճարողները ընտրել են շահութափարկի կանխավճարների կատարման՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված այլ ընտրանքային եղանակը, ապա շահութափարկի կանխավճարն առաջին անգամ կատարում են:

1) հայտարարության ներկայացման օրն ընդգրկող եռամսյակի համար, եթե հայտարարությունը ներկայացվել է մինչև տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ը ներառյալ.

2) հայտարարության ներկայացման օրն ընդգրկող եռամսյակին հաջորդող եռամսյակի համար, եթե հայտարարությունը ներկայացվել է տվյալ եռամսյակի վերջին ամսվա 20-ից հետո:

«5. Նարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կամ որպես նոտար նշանակված հարկ վճարողները՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա եռամսյակների համար, իսկ նախորդ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող չհամարված, ինչպես նաև ընթացիկ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարված հարկ վճարողներ ընթացիկ հարկային տարվա եռամսյակների համար շահութափարկի կանխավճարներ չեն կատարում»:

6. Եթե հարկ վճարողը Օրենսգրքի 59-րդ հոդվածի պահանջների խախտմամբ իրեն չի համարել ԱԱՀ վճարող, սակայն հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողության արդյունքում տվյալ հարկ վճարողը համարվել է ԱԱՀ վճարող, ապա շահութափարկի կանխավճարն առաջին անգամ կատարվում է ստուգման ակտը կամ այլ փաստաթուղթը հարկ վճարողին ներկայացնելու օրն ընդգրկող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա առաջին եռամսյակի համար, եթե տվյալ հարկային տարում հարկ վճարողը, Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող:

7. Այն հարկ վճարողը, որը հարկային մարմնին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝

1) որևէ օրվանից սկսած՝ անորոշ ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև գործունեությունը վերսկսելու մասին հարկային մարմնի հաստատած ձևով ներկայացվող հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը (բայց ոչ շուտ, քան գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության ներկայացման օրը) ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական եռամսյակների համար շահութափարկի կանխավճարներ կարող է չկատարել.

2) որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող ամբողջական եռամսյակների համար շահութափարկի կանխավճարներ կարող է չկատարել:

### 8. Նարկային տարվա ընթացքում՝

1) բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպություններից յուրաքանչյուրը վերակազմակերպման պետական գրանցման օրն ընդգրկող հարկային տարվա եռամսյակների համար շահութափարկի կանխավճարը կարող է կատարել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով «կանխավճարներ չի կատարում».



2) առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում այն կազմակերպությունը, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, շարունակում է սույն հոդվածով սահմանված կարգով կատարել շահութահարկի կանխավճարներ՝ առանց հաշվի առնելու վերակազմակերպման հանգամանքը, իսկ առանձնացված կազմակերպությունը կամ կազմակերպությունները վերակազմակերպման պետական գրանցման օրն ընդգրկող հարկային տարվա եռամսյակների համար շահութահարկի կանխավճարը կարող են կատարել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով «կանխավճարներ չեն կատարում».

3) միաձուման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպությունը վերակազմակերպման պետական գրանցման օրն ընդգրկող հարկային տարվա եռամսյակների համար շահութահարկի կանխավճարը կարող է կատարել սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով «կանխավճարներ չի կատարում».

4) միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպությունը, որին միացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, շարունակում է սույն հոդվածով սահմանված կարգով կատարել շահութահարկի կանխավճարներ՝ առանց հաշվի առնելու վերակազմակերպման հանգամանքը:

(135-րդ հոդվածը լրաց., փոփ. 21.12.17 ԴՕ-266-Ն, 21.06.18 ԴՕ-338-Ն, փոփ. 25.06.19 ԴՕ-68-Ն, փոփ., խմբ. 16.06.20 ԴՕ-302-Ն)

(2020 թվականի 2-րդ եռամսյակի համար օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված շահութահարկի կանխավճարներ չեն հաշվարկվում և չեն վճարվում համաձայն 16.06.20 ԴՕ-302-Ն օրենքի 5-րդ հոդվածի:

2020 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով և չափով հաշվարկված շահութահարկի կանխավճարի և 2019 թվականի շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարի տարբերության չափով ծցրտվում է 2020 թվականի հուլիսի 1-ից հետո առաջիկա եռամսյակի շահութահարկի կանխավճարի գումարը՝ համաձայն 16.06.20 ԴՕ-302-Ն օրենքի 6-րդ հոդվածի:)

## ՄԱՍ 4

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՄԱՍ

#### ԲԱԺԻՆ 22

#### ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### ԳԼՈՒԽ 82

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 451. Օրենսգրքի 6-րդ բաժնին վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումը**

1. 2017 թվականի ընթացքում շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակով շահութահարկի կանխավճարները հաշվարկվում և կատարվում են մինչև 2017 թվականի համապատասխան եռամսյակների վերջին ամսվա 15-ը ներառյալ: Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած եռամսյակների ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազան հաշվարկվում է հիմք ընդունելով այդ եռամսյակների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի եռամսյակային հաշվարկներում արտացոլված ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքների հարկման բազաները (ամսական ԱԱՀ վճարող համարվողների դեպքում՝ այդ եռամսյակներում ներառված ամիսների համար հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի ամսական հաշվարկներում

արտացոլված՝ ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործադրների հարկման բազաների հանրագումարը):

2. Ոեզիդենտ շահութահարկ վճարողը և մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողը Օրենսգորքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով շահութահարկի կանխավճարներն առաջին անգամ հաշվարկում և վճարում են 2018 թվականի համար: Մինչև 2017 թվականի շահութահարկի գումարի հաշվարկումը (մինչև 2017 թվականի համար շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելը) սույն մասում նշված հարկ վճարողները շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում են 2017 թվականի վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով, **բացառությամբ Օրենսգորքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:** 2017 թվականի շահութահարկի գումարը հաշվարկելուց (շահութահարկի հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց) հետո Օրենսգորքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով առաջին անգամ կանխավճարի կատարման ժամանակ կատարվում է մինչև շահութահարկի հաշվարկի ներկայացումը՝ 2018 թվականի ընթացքում, կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ հարկային տարվա սկզբից աճող հանրագումարով և Օրենսգորքի 135-րդ հոդվածի 1-ին մասում նշված չափերով:

3. Անհատ ձեռնարկատերերը և նոտարները Օրենսգորքի 135-րդ հոդվածով սահմանված կարգով շահութահարկի կանխավճարներն առաջին անգամ հաշվարկում և վճարում են 2018 թվականի առաջին եռամսյակի համար՝ նախորդ հարկային տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարի փոխարեն հիմք ընդունելով 2017 թվականի հարկային տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտային հարկի գումարը: Մինչև 2017 թվականի եկամտային հարկի գումարի հաշվարկումը (մինչև 2017 թվականի համար տարեկան եկամուտների մասին հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց) սույն մասում նշված հարկ վճարողները շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում են 2017 թվականի եկամտային հարկի վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով, **բացառությամբ Օրենսգորքի 135-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:** 2017 թվականի եկամտային հարկի գումարը հաշվարկելուց (տարեկան եկամուտների մասին հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց) հետո Օրենսգորքի 135-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով առաջին անգամ կանխավճարի կատարման ժամանակ կատարվում է մինչև տարեկան եկամուտների մասին հաշվարկի ներկայացումը՝ 2018 թվականի ընթացքում, կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ հարկային տարվա սկզբից աճող հանրագումարով և Օրենսգորքի 135-րդ հոդվածի 1-ին մասում նշված չափերով:<sup>4</sup> Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը ձեռք բերված (կառուցված, մշակված) հիմնական միջոցների գումարների հաշվարկման նպատակով սկզբնական արժեքների հաշվարկման նպատակով սկզբնական արժեքների հաշվարկման նպատակով:

1) 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային արժեքները Օրենսգորքի ընդունումից հետո համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով սկզբնական արժեքների հաշվարկման նպատակով:

2) 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ մնացորդային ամորտիզացիոն ժամանակահատվածները Օրենսգորքի ընդունումից հետո համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ:

5. 2014 թվականի հունվարի 1-ից հետո ձեռք բերված (կառուցված, մշակված) հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով՝

1) սկզբնական արժեքների և համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների տարբերությունները՝ հաշվի առաջ նաև 2014 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում համապա-

տասխան հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը և օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների անորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով սկզբնական արժեքներ.

2) Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների անորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով համապատասխան խնբերի անորտիզացիոն ժամկետների և համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների անորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով «Հահութահարկի մասին» Դայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվարկվող անորտիզացիոն մասհանումների փաստացի կատարման ժամկետների տարբերությունները համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների անորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով անորտիզացիոն նվազագույն ժամկետներ:

5.1. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության իմաստով՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վրա կատարված ծախսերը որպես կապիտալ կամ ընթացիկ բնույթի ծախսեր դասակարգելու և հաշվառելու նպատակով սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի դրույթները կիրառելի չեն:

6. 2017 թվականի համար հարկային գործակալների ոչ ռեզիդենտի շահութահարկի աճսական վճարումների վերջնաժամկետը սահմանվում է 2018 թվականի փետրվարի 20-ը ներառյալ:

7. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ վճարված և փաստացի շահութահարկի գումարից չհաշվանցված նվազագույն շահութահարկի գումարները հաշվանցվում են 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի տվյալ հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկի կանխավճարների գումարները գերազանցող փաստացի շահութահարկի գումարներից:

(451-րդ հոդվածը լրաց., խմբ. 21.12.17 ՀՕ-266-Ն, փոփ. 21.06.18 ՀՕ-338-Ն, 16.06.20 ՀՕ-302-Ն)





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՈՐՈՇՈՒՄ

18 հունիսի 2020 թվականի N 983-L

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՄԻԶՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսաներորդ միջոցառումը և դրա շրջանակներում աջակցության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

2020 թ. հունիսի 19

Երևան

Ն. Փաշինյան

Հավելված  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
հունիսի 18-ի N 983-L որոշման

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՄԻԶՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Միջոցառման նպատակն է օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով մասնավոր հատվածի տուժած ոլորտների (այսուհետ՝ տուժած ոլորտ) վարձու աշխատողներին, քաղաքացիական պայմանագրով աշխատողներին և անհատ ձեռնարկատերներին (այսուհետ՝ շահառու):

2. Սույն որոշման իմաստով տուժած ոլորտներ են համարվում հետևյալ գործունեության տեսակները՝

1) հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ.

2) հանրային սննդի ծառայություններ.

3) զբոսաշրջային ծառայություններ.

4) նախադպրոցական կրթություն (մասնավոր մանկապարտեզներ).

5) սպորտի բնագավառում գործունեություն (սպորտային ակումբներ, լողավազաններ).

6) զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն.

7) կինոթատրոնների գործունեություն.

8) լուսանկարչության բնագավառում գործունեություն.

9) ավտոմեքենաների և այլ առարկաների վարձույթ.

10) կրթական գործունեություն մշակույթի, երաժշտության, սպորտի, պարի բնագավառում.

11) ստեղծագործական, արվեստի և հանդիսարիդ ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն.

12) խաղատների գործունեություն:

3. Եթե գործատուն գործունեություն է իրականացնում մեկից ավելի ոլորտներում (որոնցից մեկը կամ մի քանիսը ներառված են տուժած ոլորտներում, իսկ մնացածը՝ ոչ), ապա գործատուի վարձու աշխատողներին աջակցություն տրամադրվում է, եթե տուժած ոլորտներում գործունեության տեսակարար կշիռը տվյալ տնտեսավարող սուբյեկտի ընդհանուր գործունեությունում կազմում է առնվազն 40 տոկոս: Ընդ որում, այս դեպքում շահառու են հանդիսանում գործատուի բոլոր վարձու աշխատողները:

4. Վարձու աշխատողները (այդ թվում՝ քաղաքացիական պայմանագրով աշխատողները) շահառու են հանդիսանում այն դեպքում, եթե 2020 թվականի մարտի 1-ից մինչև հունիսի 15-ը ընկած ժամանակահատվածում առնվազն 1 օր աշխատանքային կամ քաղաքացիական հարաբերությունների մեջ են գտնվել տուժած ոլորտի գործատուի հետ (այդ թվում, եթե 2020 թվականի հունիսի 15-ի դրությամբ գործատուն լուծարվել է կամ դադարեցրել է գործունեությունը):

Սույն կետում նշված անձանց աջակցությունը տրամադրվում է՝ անկախ գործատուի կողմից աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ վճարում կամ պայմանագրային եկամուտ հաշվարկելու հանգամանքից:

5. Անհատ ձեռնարկատերերը շահառու են հանդիսանում այն պարագայում, եթե 2020 թվականին գործունեություն են ծավալել տուժած ոլորտում: Անհատ ձեռնարկատերերը շահառու են հանդիսանում՝ անկախ 2020 թվականի առաջին եռամյակում իրացման շրջանառության չափից:

6. Սույն հավելվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերում նշված՝ տուժած ոլորտների գործատուների և անհատ ձեռնարկատերերի ՀՎՀՀ-ների վերաբերյալ տեղեկատվությունը, անհատ ձեռնարկատերերի դեպքում նաև անհատ ձեռնարկատերերի ՀՕՀ-ների վերաբերյալ տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությանը (այսուհետ՝ ծառայություն) տրամադրում է՝ իհմք ընդունելով 2020 թվականի հունիսի 15-ի դրությամբ ներկայացված՝ հարկ վճարողների կողմից 2020 թվականի հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող վերջին հարկային հաշվարկում արտացոլված Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ կողը և գործունեության տեսակների տեսակարար կշիռը:

7. Աջակցությունը տրամադրվում է միամված՝ նվազագույն աշխատավարձի չափով:

8. Աջակցությունը նշանակում և վճարում է՝ ծառայությունը՝ շահառուի կողմից <https://dimum.ssa.am/> կայքերին էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա: Աջակցությունը վճարվում է բացառապես շահառուի քարտային հաշվին փոխանցելու միջոցով:

9. Ծառայության պաշտոնական կայքերում հրապարակվում է սույն միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած անձանց վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

1) աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը.

2) գործատուի ՀՎՀՀ-ն, անվանումը.

3) ամփոփ տեղեկատվություն տուժած ոլորտների գործատուների թվի, աջակցություն ստացած աշխատողների և նրանց վճարված գումարների վերաբերյալ:

10. Համատեղությամբ աշխատող, միաժամանակ վարձու աշխատող (քաղաքացիական պայմանագրով աշխատող) և անհատ ձեռնարկատեր հանդիսացող շահառուի դեպքում աջակցությունը տրամադրվում է մեկ անգամ:

11. Ծառայությունը, իհմք ընդունելով սույն միջոցառման 6-րդ կետի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը, ձևավորում է շահառուների ցանկ:

12. Շահառուների ցանկում ներառվում են շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը, գործատուի ՀՎՀՀ-ը:

13. Դիմումը ներկայացնելու համար անձը <https://dimum.ssa.am/> կայքէջից մուտք է գործում համապատասխան ծրագրային միջավայր և ծառայություն է ներկայացնում՝

- 1) շահառուի անունը, ազգանունը, հայրանունը, հանրային ծառայությունների համարանիշը.
- 2) շահառուի հետ հետադարձ կապի բջջային հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.
- 3) շահառուի քարտային հաշվին կցված վճարային քարտի 16-նիշանոց համարը:

14. Ծառայությունն առցանց ռեժիմում ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը (համապատասխանությունը բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներին) և շահառուի տվյալների առկայությունը շահառուների ցանկում:

15. Շահառուի տվյալները բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներին համապատասխանելու դեպքում ծառայությունը հաշվառում կամ մերժում է էլեկտրոնային դիմումը: Դիմումը մերժելու դեպքում (եթե շահառուն ընդգրկված չէ շահառուների ցանկում) շահառուի էլեկտրոնային փոստի հասցեին էլեկտրոնային ուղարկվում է համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն:

16. Ծառայությունն օրական պարբերականությամբ սույն կարգի 15-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմումների վերաբերյալ տեղեկատվությունը համադրում է շահառուների ցանկի հետ և ձևավորում է վճարման ցուցակ:

17. Վճարման ցուցակում ներառված շահառուների տվյալները հանվում են շահառուների ցանկից:

18. Վճարման ցուցակում ներառվում են բանկի անվանումը, ինչպես նաև շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը և վճարման ենթակա գումարը:

19. Աջակցության գումարը վճարվում է անկանխիկ եղանակով՝ շահառուի քարտային հաշվին փոխանցելով միջոցով:

20. Վճարման ցուցակը բանկին փոխանցելու օրվան հաջորդող օրը ծառայությունը դրա մասին հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով տեղեկացնում է շահառուներին:

21. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

22. Աջակցության գումարն ընտանիքի անապահովությունը գնահատելիս ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չի մտնում:

**Հայաստանի Հանրապետության  
Վարչապետի աշխատակազմի  
նեկավար**



**Է. Աղաջանյան**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2020 թվականի N 963-Լ

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

- 1) կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քանամեկերորդ միջոցառումը՝ համաձայն N 1 հավելվածի:
- 2) կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քանամեկերորդ միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքների կիրառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սահմանել, որ սույն միջոցառման ֆինանսավորման և իրականացման պատասխանատու մարմինն է համարվում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Ն. Փաշինյան

2020 թ. հունիսի 15  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
հունիսի 15-ի N 963-Լ որոշման

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Միջոցառման նպատակն է օժանդակել կորոնավիրուսի տարածման հետևանքով Հայաստանի Հանրապետության առանձին տնտեսավարողների մոտ առաջացած դժվարությունների հետևանքով արդյունավետ աշխատատեղերի պահպանությանը:

2. Միջոցառման շահառու հանդիսանում են ՀՀ տարածքում պետական գրանցում ստացած այն իրավաբանական անձինք կամ հաշվառված անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ բանկերի, վարկային կազմակերպությունների, գրավատների, ապահովագրական ընկերությունների, արտարժույթի փոխանակման կետերի, արժեթղթերի առ ու վաճառքով գրաղվող կազմակերպությունների, ներդրումային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, վիճակախառների և շահումով խաղերի կազմակերպիչների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ապահովագրական բրոքերների, վարկային և ապահովագրական բյուրոների, պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետական կառավարչական հիմնարկների, համայնքային կառավարչական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների, հասարակական միավորումների, ոչ առևտրային կոոպերատիվների, կուսակցությունների), որոնք 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2020 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում անընդհատ ունեցել են 2-100 վարձու աշխատող, և նշված իրավաբանական անձանց կամ հաշվառված անհատ ձեռնարկատերի (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտ) կողմից հաշվարկված եկամուտների փաստացի ֆոնդը նշված ժամանակահատվածում չի նվազել, կամ նվազումը կազմել է ոչ ավելի, քան 5 տոկոս: Ընդ որում, տնտեսավարող սուբյեկտների աշխատողների քանակի և վերջիններիս գծով

հաշվարկված եկամուտների հաշվարկման կարգը, ծանուցման եղանակը, դիմումների ներկայացման ժամկետը սահմանվում է սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված հավելվածով:

3. Սույն միջոցառման շահառումներին տրամադրվում է միանվագ դրամաշնորհ:
4. Միանվագ դրամաշնորհի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{ԱՉ}=(\text{ԱՀ}:\text{ԱՔ})*(\text{ԱՔ}:5)$$

որտեղ՝

ԱՀ-ն՝ պետության կողմից տրամադրվող աջակցության չափն է,

ԱՔ-ն՝ տնտեսավարող սուբյեկտի բոլոր աշխատողների համար հաշվարկված եկամուտների հանրագումարն է,

ԱՔ-ն՝ տնտեսավարող սուբյեկտի աշխատողների քանակն է: Ընդ որում, (ԱՔ:5) բանաձևը կլորացվում է դեպի ներքև:

5. Սույն հավելվածի 4-րդ կետում նշված բանաձևը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

1) մինչև 5 աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտների դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար 2020 թվականի մայիս ամսվա համար հաշվարկված եկամուտների հանրագումարը բաժանվում է աշխատողների թվին.

2) 5 և ավելի աշխատող ունեցող տնտեսավարող սուբյեկտների դեպքում՝ տնտեսավարողին տրամադրվող աջակցության չափը որոշելու համար՝

ա. հաշվարկվում է տնտեսավարողի 2020 թվականի մայիս ամսվա ամսական միջին հաշվարկված եկամուտների չափը, այսինքն՝ 2020 թվականի մայիս ամսվա համար հաշվարկված եկամուտների հանրագումարը բաժանած աշխատողների թվին,

բ. հաշվարկվում է աշխատողների ընդհանուր թվի մեկ հինգերորդ մասը, այսինքն՝ աշխատողների ընդհանուր թիվը բաժանվում է 5-ի՝ կլորացումով դեպի ներքև,

գ. հաշվարկվում է սույն ենթակետի «ա» և «բ» պարբերությունների արդյունքների արտադրյալը և կլորացվում մինչև միավոր:

### ՀՀ Վարչապետի աշխատակազմի

նեկավար

Է. Աղաջանյան

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2020 թվականի  
հունիսի 15-ի N 963-L որոշման

## Կ Ա Ր Գ

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ

#### ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

#### ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Օժանդակությունը տրամադրվում է այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք 2020 թվականի մարտ, ապրիլ և մայիս ամիսների համար օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներով ունեցել են ամսական 2-100 աշխատող (ներառյալ 2 և 100) և հաշվարկված եկամուտների փաստացի ֆոնդը նշված ժամանակահատվածում չի նվազել, կամ նվազումը կազմել է ոչ ավելի, քան 5 տոկոս:

Աշխատողների թիվը որոշվում է օրենքով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված համապատասխան ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներում արտացոլված աշխատողների (այն աշխատողների, որոնց գծով [1.6], [1.7], [1.8], [1.9] սյունակների հանրագումարը մեծ է զրոյից) քանակի հիման վրա (այդ թվում՝ հաշվի առնելով նաև քաղաքացիական պայմանագրերով աշխատողների թիվը):

2. Տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենքով սահմանված կարգով 2020 թվականի մայիս ամսվա համար եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ ներկայացնելու օրվան հաջոր-

դող մեկ աշխատանքային օրվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտը ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից իր անձնական էջին ստանում է ծանուցում (իսկ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հարկային հաշվարկ ներկայացրած տնտեսավարողները, ոչ ուշ քան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ միջոցառման շահառու հանդիսանալու վերաբերյալ, եթե՝

1) տնտեսավարող սուբյեկտի կողմից 2020 թվականի մայիս ամսվա համար օրենքով սահմանված կարգով ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում հայտարարագրված աշխատողների թիվը գերազանցում է (կամ հավասար է) մարտ և ապրիլ ամիսների համար օրենքով սահմանված կարգով ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներում հաշվարկված աշխատողների թիվը, և

2) տնտեսավարող սուբյեկտի կողմից 2020 թվականի մայիս ամսվա համար օրենքով սահմանված կարգով ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում հայտարարագրված աշխատողների գծով նշված եկամուտների (այսուհետ՝ հաշվարկված եկամուտների) մեծությունը գերազանցում է (կամ հավասար է) մարտ և ապրիլ ամիսների համար օրենքով սահմանված կարգով ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկներում հաշվարկված եկամուտների մեծության 95 տոկոսը:

Սույն կարգի իմաստով հաշվարկված եկամուտների մեծությունը հաշվարկվում է եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում արտացոլված աշխատողների գծով [1.6], [1.7], [1.8], [1.9] սյունակներում նշված եկամուտների հանրագումարով:

Սույն կարգի իմաստով 2020 թվականի մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ է համարվում մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը ներառյալ հարկային մարմին ներկայացված համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկը, 2020 թվականի ապրիլ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ է համարվում մինչև 2020 թվականի մայիսի 31-ը ներառյալ հարկային մարմին ներկայացված համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկը, իսկ 2020 թվականի մայիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկ է համարվում մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ հարկային մարմին ներկայացված համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի հարկային հաշվարկը:

3. ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգից իր անձնական էջին միջոցառման շահառու հանդիսանալու վերաբերյալ ծանուցում ստանալուց հետո տնտեսավարող սուբյեկտը ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում տեղադրված ձևանուշով էլեկտրոնային եղանակով ներկայացնում է դիմում՝ միանվագ դրամաշնորհ ստանալու համար:

Սույն կետով սահմանված դիմումները (այդ թվում՝ ճշտված) կարող են ներկայացվել մինչև 2020 թվականի հուլիսի 10-ը ներառյալ:

4. ՀՀ ՊԵԿ կողմից դիմումներն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ստուգվում են միջոցառման շահառուների ցանկում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանելու հիմքերը, կատարվում է միանվագ դրամաշնորհի մեծության հաշվարկ, կազմվում է վճարման հանձնարարական և ներկայացվում է գանձապետարան: Վճարման հանձնարարագրի ներկայացումը հավաստում է դրամաշնորհի տրամադրման քաղաքացիական պայմանագրի կնքման փաստը:

5. Միանվագ դրամաշնորհի գումարը շահառուին փոխանցելու նպատակով կոմիտեի կողմից գանձապետարան ներկայացվող վճարման հանձնարարականում նշվում են հետևյալ տվյալները՝

- 1) շահառուի անվանումը կամ անունը, ազգանունը.
- 2) շահառուի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).
- 3) շահառուի բանկային հաշվի համարը.
- 4) միանվագ դրամաշնորհի գումարի չափը:

6. Վճարման հանձնարարականը ներկայացվելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում միանվագ դրամաշնորհը փոխանցվում է շահառուի բանկային հաշվին:

### ՀՀ Վարչապետի աշխատակազմի նեկավար

Է. Աղաջանյան



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020 թվականի N 853-Ն

### ՊԱՐԶԱԾ ԶԵՌՔԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՐՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկման կանոնները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

2020 թ. մայիսի 30

Ն. Փաշինյան

Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2020 թվականի  
մայիսի 27-ի N 853-Ն որոշման

## Կ Ա Ր Գ

### ՊԱՐԶԱԾ ԶԵՌՔԻ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՐՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով սահմանվում են պարզած ձեռքի հեռավորության տիրույթի հաշվարկման կանոնները:  
2. Սույն կարգով կիրառվող հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգրք) սահմանված ինաստն ու նշանակությունը:

3. Ֆինանսական ցուցանիշի առավելագույն և նվազագույն արժեքների միջև ձևավորված տիրույթը համարվում է պարզած ձեռքի հեռավորության տիրույթը, եթե պարզած ձեռքի հեռավորության տիրույթի որոշման համար ֆինանսական ցուցանիշի ստացված բոլոր արժեքները ձևավորվել են չվերահսկվող գործարքների արդյունքում, և չվերահսկվող գործարքները համադրելի են վերահսկվող գործարքի հետ՝ համաձայն Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, այդ թվում Օրենսգրքի 366-րդ հոդվածով սահմանված կարգով համադրելիության համապատասխան ճշգրտումներ կատարած լինելու դեպքում, համապատասխան ճշգրտումներն իրականացվել են Օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն:

4. Այն դեպքում, երբ վերահսկվող գործարքի հետ համադրելի չվերահսկվող գործարքների ֆինանսական ցուցանիշներից գոնե մեկը բավականաչափ հուսալի չէ՝ հաշվի առնելով նաև Օրենսգրքի 366-րդ հոդվածով սահմանված համադրելիության համապատասխան ճշգրտումները, ապա պարզած ձեռքի հեռավորության տիրույթը կորոշվի հետևյալ կարգով՝

- 1) ֆինանսական ցուցանիշի բոլոր կիրառված արժեքները դասավորվում են աճման կարգով.
- 2) համարակալվում են ըստ աճման կարգի՝ ամենացածր կիրառված արժեքից մինչև ամենաքարձրը, ընդ որում նույն արժեքի առկայության դեպքում նման արժեքները համարակալվում են որպես առանձին արժեքներ.

3) պարզած ձեռքի հեռավորության տիրույթի ստորին սահմանը (շեմը) որոշվում է հետևյալ եղանակով՝

ա. եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.25-ի արտադրյալը ամբողջ թիվ է, ապա նշված ստորին սահմանը պետք է լինի ֆինանսական ցուցանիշի արժեքի՝ այդ արտադրյալին համապատասխան համարի և դրան անմիջապես հաջորդող համարին համապատասխան ֆինանսական ցուցանիշի արժեքի միջին թվաբանական արժեքը,

բ. եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.25-ի արտադրյալը կոտորակային թիվ է, ապա նշված ստորին սահմանը պետք է լինի այն ֆինանսական ցուցանիշի արժեքը, որը հավասար է այդ կոտորակային արժեքի ամբողջ մասին գումարած մեկ և այդ ստացված համարին համապատասխան ֆինանսական ցուցանիշը.

4) պարզած ձեռքի հեռավորության տիրույթի վերին սահմանը (շեմը) որոշվում է հետևյալ եղանակով՝

ա. եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.75-ի արտադրյալը ամբողջ թիվ է, ապա նշված վերին սահմանը պետք է լինի ֆինանսական ցուցանիշի արժեքի՝ այդ արտադրյալին համապատասխան համարի և դրան անմիջապես հաջորդող համարին համապատասխան ֆինանսական ցուցանիշի արժեքի միջին թվաբանական արժեքը,

բ. եթե ֆինանսական ցուցանիշի օգտագործված արժեքների թվի և 0.75-ի արտադրյալը կոտորակային թիվ է, ապա նշված վերին սահմանը պետք է լինի այն ֆինանսական ցուցանիշի արժեքը, որը հավասար է այդ կոտորակային արժեքի ամբողջ մասին գումարած մեկ և այդ ստացված համարին համապատասխան ֆինանսական ցուցանիշը:

**Հայաստանի Հանրապետության**

**Վարչապետի աշխատակազմի**

**ղեկավար**

**Ե. Աղաջանյան**



## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 879-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ

#### Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 879-Ն որոշման մեջ (ասուհետ՝ N 879-Ն Որոշում) փոփոխություններ և լրացումներ են կատարվել 2020 թվականի մայիսի 27-ին, որը ստորագրվել է 2020 թվականի հունիսի 11-ին: Հաշվառման համարը՝ N 916-Ն:
- ✓ N 879-Ն Որոշման մեջ փոփոխություններ լրացումներ են կատարվել 4 անգամ:
- ✓ 2020 թվականի մայիսի 27-ին ընդունված N 916-Ն որոշմամբ՝
  - փոփոխություններ են կատարվել N 879-Ն Որոշման կարգի «1. Կիրառման ոլորտը» գլխի 2-րդ կետում, կարգի «16. Օբյեկտի տեխնիկական հսկողության ծառայության ծախսեր» գլխի 31-րդ, 32-րդ կետերում.
  - N 879-Ն Որոշման կարգի «16. Օբյեկտի տեխնիկական հսկողության ծառայության ծախսեր» գլուխը լրացվել է 32.1-ին և 32.2-րդ կետերով:
- ✓ 2020 թվականի մայիսի 27-ին ընդունված N 916-Ն որոշումն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 18-ից և սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և դեռևս չավարտված գննան գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:
- ✓ Որոշման մեջ կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա կազմված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, լրացումները՝ գումավորված:

Այսպես՝

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2011 թվականի N 879-Ն

**ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ  
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ  
ՄԵԶ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԾԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ  
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապե-



տուրյան կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման NN 5, 10 և 11 հավելվածներում կատարել լրացումներ ու փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական իիմնարկի պահպանման ծախսերը, ինչպես նաև գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման նոր կարգի կիրարկման մեթոդաբանության մշակումը ֆինանսավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության հատկացնել 43,389.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին՝ համաձայն NN 6 և 7 հավելվածների:

3. Հաստատել գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը՝ համաձայն N 8 հավելվածի:

4. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի ծրագրերով նախատեսված կապիտալ վերանորոգման և շինարարության աշխատանքների համար մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերը ենթակա չեն վերանայման ու լրամշակման և գործում են մինչև դրանցով նախատեսված աշխատանքների ավարտը:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման նոր կարգի կիրարկման մեթոդաբանությունը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սարգսյան**

2011 թ. հունիսի 6  
Երևան

**Հավելված N 8**  
**ՀՀ կառավարության 2011 թվականի  
հունիսի 23-ի N 879-Ն որոշման**

## Կ Ա Ր Գ

### ԳՈՐԾՈՂ ԳՆԵՐՈՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

#### 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգ» նորմատիվատեխնիկական փաստաթղթի (այսուհետ՝ կարգի) կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Շինարարության ոլորտում գնագոյացման նորմերի և նորմատիվների կիրառումն ապահովելու մասին» N 1484-Ն որոշմամբ նախատեսված քաղաքաշինական գործունեության սուբյեկտների և կամ մասնակիցների (այդ թվում՝ կառուցապատողների, քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների, շինարարություն իրականացնողների, քաղաքաշինական գործունեության վերահսկողություն իրականացնողների) վրա:

2. Սույն կարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող նոր շինարարության, գոյություն ունեցող շենքերի և շինությունների հիմնանորոգման (վերակառուցման, վերականգնման, ուժնեղացման), ընդլայնման, արդիականացման (հետագայում՝ Շինարարության) աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմնան ընթացքում անհրաժեշտ ժախսերի (բացառությանը նախա-

գիտական ուսումնասիրության և անհրաժեշտ փորձաքննության արդյունքում տրվող եզրակացությունների ձեռքբերման ծախսերի) հաշվարկման նորմերը նախատեսելու համար:

«2. Սույն կարգը մշակվել է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող նոր շինարարության, գոյություն ունեցող շենքերի և շինությունների հիմնանորոգման (Վերակառուցման, վերականգնման, ուժեղացման), ընդլայնման, արդիականացման (հետագայում՝ շինարարության), պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման, փոփոխման, ամրակայման, տեղափոխման ու վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման ընթացքում անհրաժեշտ ծախսերի (բացառությամբ մասնագիտական ուսումնասիրության և անհրաժեշտ փորձաքննության արդյունքում տրվող եզրակացությունների ձեռքբերման ծախսերի) հաշվարկման, այդ թվում՝ պարտադիր և խորհրդատվական բնույթ կրող նորմերը սահմանելու համար»:

(2-րդ կետը խմբ. 27.05.20 N 916-Ն)

...

## 16. ՕԲՅԵԿՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱԽՄԵՐ

—31. Պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության ամբողջ ընթացքում մասնագիտական որակավորում ունեցող (արտոնագրված) անձի կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ տեխնիկական ծառայության մատուցման համար անհրաժեշտ ծախսերը սահմանվում են և հաշվարկվում օբյեկտի շինունաշային աշխատանքների նախահաշվային արժեքից՝ ըստ 7-այլուսակում նշված տոկոսաչափի (բացառությամբ 8-րդ այլուսակում նշված օբյեկտների):

«31. Շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման համար անհրաժեշտ ծախսերի նորմատիվները, անկախ ծրագրի ֆինանսավորման աղբյուրից, կրում են խորհրդատվական բնույթ պայմանագրային արժեքների (բացառությամբ կարգի 32.2-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքերի), բյուջեների ծևավորման ու նախահաշիվների կազման համար և սահմանվում ըստ 7-րդ այլուսակում նշված տոկոսաչափի (բացառությամբ 8-րդ այլուսակում նշված օբյեկտների):».

Այլուսակ 7

Հ/հ	Օբյեկտի շինունաշային աշխատանքների նախահաշվային արժեքը (մլն դրամ)	Ծառայության մատուցման ծախսերի տոկոսաչափ (%)
	մինչև 50.0 մերաոյալ	2
	50-ից ավելի մինչև 100 մերաոյալ	1.8
	100-ից ավելի մինչև 300 մերաոյալ	1.5
	300-ից ավելի մինչև 500 մերաոյալ	1.3
	500-ից ավելի մինչև 800 մերաոյալ	1.2
	800-ից ավելի մինչև 1000 մերաոյալ	1.1
	1000-ից ավելի	1.0

(31-րդ կետը խմբ. 27.05.20 N 916-Ն)

32. Պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման, փոփոխման, ամրակայման, տեղափոխման ու վերանորոգման տեխնիկական հսկողության ծառայության ծախսերի համար նախատեսվում են հետևյալ տոկոսաչափերը՝ ըստ 8-այլուսակի:

«32. Պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման, փոփոխման, ամրակայման,

**ՄԵՂԱՎԻԽՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ Աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման համար անհրաժեշտ ծախսերի նորմատիվները, անկախ ծրագրի ֆինանսավորման աղբյուրից, կրում են խորհրդատվական բնույթ պայմանագրային արժեքների, բյուջեների ձևավորման ու նախահաշվիվների կազմման համար և սահմանվում ըստ 8-րդ աղյուսակում նշված տոկոսաչափի:».**

#### Աղյուսակ 8

Ն/Ի	Օրյեկտի շինմոնտաժային աշխատանքների նախահաշվային արժեքը (մլն դրամ)	Ծառայության մատուցման ծախսերի տոկոսաչափ (%)
	մինչև 20.0 մերայալ	3.0
	20-ից ավելի մինչև 35 մերայալ	2.5
	35-ից ավելի մինչև 50 մերայալ	2.0
	50-ից ավելի մինչև 70 մերայալ	1.5
	70-ից ավելի մինչև 90 մերայալ	1.25
	90-ից ավելի մինչև 120 մերայալ	1.0
	120-ից ավելի մինչև 200 մերայալ	0.75
	200-ից ավելի մինչև 250 մերայալ	0.6
	250-ից ավելի մինչև 300 մերայալ	0.5
	300-ից ավելի մինչև 350 մերայալ	0.4
	350-ից ավելի	0.25

#### (32-րդ կետը խմբ. 27.05.20 N 916-Ն)

«32.1. Տեխնիկական հսկողության ծառայության (այդ թվում՝ գնման գործընթացների շրջանակներում նախատեսվող) պայմանագրային արժեքը կարող է ձևավորվել տվյալ ժամանակահատվածում գործող շուկայական գնին կամ անալոգիայի սկզբունքով ընտրված ներդրումային ծրագրի նկատմամբ իրականացված հսկողության փաստացի ծախսերին համապատասխան՝ պատվիրատուի (կառուցապատողի) և ծառայություն մատուցողի (այդ թվում՝ մրցույթի մասնակցի) միջև գնման գործընթացի ընթացքում վարվող բանակցությունների արդյունքում ձեռք բերված (գնային) փոխհամաձայնեցմամբ»:

#### (32.1-ին կետը լրաց. 27.05.20 N 916-Ն)

«32.2. Եթե ծառայության ձեռքբերումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գնման՝

- ոչ մրցակցային «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով ամրագրված մեկ անձից գնում կատարելու) ձևով, ապա պայմանագրի արժեքը չի կարող գերազանցել կարգով սահմանված նորմատիվների կիրառմամբ հաշվարկված որակի տեխնիկական հսկողության ծառայության առավելագույն արժեքը,

- մրցակցային ձևով, ապա ծառայության գինը կարող է ձևավորվել պատվիրատուի (կառուցապատողի) և ծառայություն մատուցողի (այդ թվում՝ մրցույթի մասնակցի) միջև վարվող բանակցությունների արդյունքում՝ պատվիրատուի հատուկ պահանջների բավարարման նպատակով և գրավոր (անալոգիայի սկզբունքով ընտրված նախադեպերի փաստաթղթային, ապացուցողական, հաշվարկային, շուկայական գնի մոնիթորինգի տվյալների) հիմնավորումների առկայությամբ»:

#### (32.2-րդ կետը լրաց. 27.05.20 N 916-Ն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ



15 մայիսի 2020 թ.

N 06-Ն

## ՀՐԱՄԱՆ

### ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N1640-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ, 14-րդ և 17-րդ կետերը՝

#### Հրամայում եմ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2010թ. նոյեմբերի 24-ի «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ստվորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003թ. օգոստոսի 25-ի N619-Ն, 2010թ. օգոստոսի 30-ի N1350-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1640-Ն հրամանի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից ստվորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003թ. օգոստոսի 25-ի N619-Ն, 2010թ. օգոստոսի 30-ի N1350-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին»:

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հաստատել «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից ստվորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգը»՝ համաձայն հավելվածի:»:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2010թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝

Ա. Հարությունյան



Հավելված  
Կրթության, գիտության մշակույթի և  
սպորտի նախարարի 2020 թ.  
մայիսի 15-ի N 06-Ն հրամանի

«Հավելված  
ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2010 թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանի

## Կ Ա Ր Գ

### ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ, ՍԱՐՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՒՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԸՆԴԳՐԿՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՈՎՈՐՈՂԻՆ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏԵԼՈՒ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են դպրոցական տարիքի երեխայի (այսուհետ՝ սովորող)՝ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն (այսուհետ՝ դպրոց)՝ ընդգրկման, հաստատությունից տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման գործընթացի հետ կապված՝ սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) և դպրոցի միջև ծագող իրավահարաբերությունները:

#### II. ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

2. Սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

3. Սովորողի ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

4. Սովորողը ընդունելու հրամանին հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, դպրոց ընդունված երեխայի տվյալները դպրոցի տնօրենը մուտքագրում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԿՏԱԿ) կողմից վարվող «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ»:

5. Ազգային փորձամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում /դասարանում/, իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը:

6. Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (նրանց օրինական ներկայացուցչը), ինչպես նաև այն դեպքում, եթե ծնողներից մեկն է ՀՀ քաղաքացի, մյուսը՝ սույն կետում նշված ներից մեկը, իրենց երեխայի ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են ինքնուրույն: Մնացած դեպքում, եթե սովորողի ծնողները ՀՀ քաղաքացիներ են, ուսուցման լեզուն հայերենն է:

7. Սովորողի ընդունելությունը դպրոցի առաջին դասարան մեկնարկում է յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ից:

8. Բոլոր այն բնակավայրերում, որտեղ գործում է մեկից ավելի առաջին աստիճանի հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող պետական դպրոց, երեխայի ընդգրկումը պետական դպրոցի առաջին դասարան կատարվում է հայտագրման միջոցով, որն իրականացվում է Նախարարության ԿՏԱԿ-ի կողմից վարվող «Սովորողներին դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգ»-ի (այսուհետ՝ համակարգ) միջոցով:

9. Սովորողների ընդունելությունը կազմակերպելիս՝ առաջնահերթությունը տրվում է տվյալ դպրոցում սովորողքույր, եղբայր ունեցող երեխաներին, ինչպես նաև՝ տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին:

10. Սույն հավելվածի 9-րդ կետում նշված առաջնահերթության ունեցող երեխաների ժնողները իրենց երեխաներին առաջին դասարան համակարգի միջոցով հայտագրում են տվյալ տարվա հունիսի 1-ից հունիսի 10-ը ներառյալ:

11. Սույն հավելվածի 9-րդ կետում նշված առաջնահերթություն չունեցող երեխաների ժնողները իրենց երեխաներին համակարգի միջոցով հայտագրում են հունիսի 11-ից:

12. Տվյալ դպրոցում սովորող երեխա ունեցող ժնողները, տվյալ դպրոցի աշխատակիցները սույն կարգի 10-րդ կետում նշված ժամանակահատվածում իրենց երեխաներին տվյալ դպրոցի առաջին դասարան չհայտագրելու և առաջնահերթությունից չօգտվելու դեպքում իրենց երեխաներին հայտագրում են ընդհանուր հիմունքներով՝ սույն կարգի 11-րդ կետում ամրագրված ժամկետներում:

13. «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ»-ի և «Սովորողներին դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգ»-ի աշխատակարգերը հաստատվում են լիազոր մարմնի կողմից:

### III. ՍՈՎՈՐՈՂԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

14. ՀՅ տարածքում դպրոցից դպրոց տեղափոխությունը կատարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան՝ ԿՏԱԿ կողմից վարվող «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգի» միջոցով։ Դասարանը որոշվում է սույն կարգի 19-րդ կետում սահմանված փաստաթղթերի հիման վրա։

15. Նախնական (արիեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից դպրոց՝ սովորողի տեղափոխությունը կատարվում է ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ 1-ին կուրսից՝ 10-րդ դասարան, 2-րդ կուրսից՝ 11-րդ դասարան, 3-րդ և 4-րդ կուրսերից՝ 12-րդ դասարան՝ բաց թողած ծրագրային նյութը լրացնելու պայմանով՝ պահպանելով սույն կարգի 19-րդ և 24-րդ կետերի պահանջները։

16. Սույն կարգի 19-րդ կետում սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության համապատասխանության դեպքում այլ երկրում ուսումնառությունն ընդհատած և ՀՅ վերադարձած սովորողի դասարանը որոշվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա։ Սույն կարգի 19-րդ կետում սահմանված փաստաթղթերի առկայության և կրթական աստիճանների տևողության անհամապատասխանության դեպքում՝ սովորողի ուսումնառությունը կազմակերպվում է մեկ դասարան բարձր (բացառությամբ 9-րդ դասարանի) կամ ցածր (կրթության տևողությունը 12 տարուց ավելի լինելու դեպքում)։

17. Այլ երկրներից ՀՅ առանց կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի՝ վերադարձած սովորողի դասարանը որոշվում է սույն կարգի 23-րդ և 24-րդ կետերի պահանջներին համապատասխան։ 1-4-րդ դասարանները այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում /դասարանում/ սովորած ՀՅ քաղաքացիների երեխաները ՀՅ վերադառնալիս ուսումը շարունակում են հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում՝ համաձայն անհատական ուսուցման պլանի։

18. Ուսումնառության ընթացքում առնվազն 5 տարի անընդեց այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում /դասարաններում/ սովորած ՀՅ քաղաքացիների երեխաները ՀՅ վերադառնալիս կարող են ուսումը շարունակել օտար լեզվով ուսուցմամբ համապատասխան դասարաններում՝ դրանց առկայության դեպքում։

### IV. ԴՊՐՈՑ ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

19. Սովորողին դպրոց ընդունելու համար ժնողը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ ուղղված տնօրենին,
- 2) երեխայի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը։ Տնօրենի «Խսկականի հետ ճիշտ է», մակագրությամբ պատճենը պահպանվում է սովորողի անձնական գործում,
- 3) 2 լուսանկար՝ 3x4 չափսի,
- 4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական



համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հակասողիալական վարք դրսորած սովորողներին համապատասխան դպրոց ընդունելու համար (չօրորոդ դասարանից սկսած),

5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների մասին,

6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար,

7) սույն կարգի 23-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում՝ փաստաթուղթ գինվորական կոմիսարիատից:

## V. ՍՈՎՈՐՈՂԻ ԱԶԱՏՈՒՄԸ ԴՊՐՈՑԻՑ

20. Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է՝

1) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա,

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

21. Սույն կարգի 20-րդ կետի 1-ին ենթակետով ավագ դպրոցից ազատված սովորողի հիմնական կրթության վկայականը հանձնվում է ծնողին, սույն կարգի 20-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ավագ դպրոցից ազատված սովորողի հիմնական կրթության վկայականը պահպանվում է տվյալ դպրոցում՝ մինչև սովորողի կամ նրա ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր դիմում ներկայացնելը:

22. Ոչ պետական կամ մասնագիտացված դպրոցից սովորողի ազատումը կարող է կատարվել նաև սույն կարգի 3-րդ կետով սահմանված ծնողի և տվյալ դպրոցի միջև կնքված պայմանագրի դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում։»:

## VI. ԱՎՐԱԿԵՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՒՇ ՍՈՎՈՐՈՂԻ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

23. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝

1) մինչև 8 տարեկանը՝ 1-ին դասարան՝ ընդիհանուր հիմունքներով,


2) 9-ից 15 տարեկան կամ մինչև 2 տարի ուսումն ընդհատած սովորող՝ իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր՝ գիտելիքների գրավոր ստուգման արդյունքում,

3) կրթական 3-րդ աստիճանում դպրոց չհաճախած (մինչև 17 տարին լրանալը) սովորողը, հիմնական կրթության վկայական ներկայացնելու դեպքում ընդունվում է իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 10-րդ դասարան ընդունվելու դեպքում՝ 10-րդ դասարան,

4) 19 տարին չլրացած սովորողը կրթական 3-րդ աստիճանի 10-րդ, 11-րդ կամ 12-րդ դասարաններում ուսումն ընդհատած լինելու դեպքում ուսումնառությունը շարունակում է ընդհատած ժամանակահատվածից։

24. Սույն կարգի 23-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերի, 14-րդ և 16-րդ կետերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագիտների խումբ։ Մասնագիտական եզրակացությունը տրվում է սովորողի՝ ուսումնական պլանով նախատեսված տվյալ դասարանի բոլոր առարկաների գիտելիքների գրավոր (դրա անհնարինության դեպքում՝ համապատասխան՝ տվյալ առարկային) ստուգման արդյունքում։ Հիմք ընդունելով մասնագիտական խմբի գրավոր եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենը սովորողին ընդունում է համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, ըստ որի՝ սովորողի համար կազմակերպվում է ուսուցում՝ բաց թողած ծրագրային նյութը յուրացնելու համար։

25. 17 տարեկանից բարձր, դպրոց չհաճախած կամ կրթական որևէ մակարդակում ուսումն ընդհատած սովորողը հանրակրթական հիմնական ծրագրերը կարող է յուրացնել ինքնակրթությամբ կամ հեռավար ուսուցման ձևով՝ Նախարարության սահմանած կարգով ստանալ հիմնական կրթության վկայական և (կամ) միջնակարգ կրթության ատեստատ։



Այսուհետ կազմակերպությունները հնարավորություն ունեն  
ուղարկելու պաշտոնական ծանուցումներ քաղաքացու՝  
պետության կողմից տրամադրած պաշտոնական  
էլեկտրոնային փոստին:

### Ի՞նչ է ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ



ԾԱՆՈՒՑՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԻ  
ՀԱՎԱՍՏՈՒՄ



ՊԱՏՇԱճ  
ԾԱՆՈՒՑՄԱՆ  
ՀԱՎԱՍՏՈՒՄ



ԾԱՆՈՒՑՄԱՆ  
ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ  
ԱՌԱՋՈՒՄ

Քաղաքացիներին նույնականացման քարտի հետ միասին  
տրամադրվում է պաշտոնական էլեկտրոնային փոստ, որին  
ուղարկված նամակների ստացումը հավաստում է  
պետությունը:



## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 752-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ

#### Տեղեկանք

- ✓ ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հուլիսի 8-ին ընդունված «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի N 589 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 752-Ն որոշման մեջ (այսուհետ՝ N 752-Ն Որոշում) փոփոխություններ են կատարվել 2020 թվականի հունիսի 11-ին, որը ստորագրվել է 2020 թվականի 2020 թվականի հունիսի 12-ին: Հաշվառման համար՝ N 921-Ն:
- ✓ N 752-Ն Որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ են կատարվել 1 անգամ:
- ✓ 2020 թվականի հունիսի 11-ին ընդունված N 921-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել N 752-Ն Որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետում, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 19-րդ կետերում, 16-րդ կետի 2-րդ ենթակետում:
- ✓ 2020 թվականի հունիսի 11-ին ընդունված N 921-Ն որոշումն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 18-ից:
- ✓ Որոշման մեջ կատարված փոփոխությունների հիման վրա կատարված ինկորպորացված տարբերակում փոփոխությունները ներկայացվում են հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, նորը՝ գումավորված:

Այսպես՝

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

#### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հուլիսի 2015 թվականի N 752-Ն

**ՄԻԶԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ**

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 589 ՈՐՈՇՈՒՄՆ  
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ճԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի

մայիսի 20-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը հաստատելու մասին» N 589 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական իրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

2015 թ. հուլիսի 14  
Երևան

**Հ. Աբրահամյան**

**Հավելված  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
հուլիսի 8-ի N 752-Ն որոշման**

**Կ Ա Ր Գ**

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԳՐԱԾ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԻ՝  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂՐՈՒՅԹԸՆԵՐ**

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՄՈՒԴ) բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և (կամ) «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտների (այսուհետ՝ հավակնորդ) Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհ) համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու հետ կապված հարաբերությունները:

2. Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է՝

1) մինչև 2014 թվականը ՄՄՈՒԴ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմանը երկրորդ կուրսում, եթե ուսումնառուած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարրերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմանը երկրորդ կուրսում, եթե ուսումնառուած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարրերությունների քանակը չի գերազանցում 8-ը: Առարկայական ժամանակաշրջանում կամ մոդուլների առարկայական տարրերությունների քանակը չի գերազանցում 8-ը: Առարկայական ժամանակաշրջանում կամ մոդուլների առարկայական տարրերությունների քանակը չի գերազանցում 8-ը, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամանակաների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 և ավելի տոկոս կազմող տարրերությունը՝ քանակը չի գերազանցում 8-ը, ապա՝

«1) եթե հավակնորդի ուսումնառուած և նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարրերությունների (առարկայական տարրերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամանակաների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 և ավելի տոկոս կազմող տարրերությունը՝ քանակը չի գերազանցում 8-ը, ապա՝

ա. մինչև 2014 թվականը ՄՄՈՒԴ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմանը երկրորդ կուրսում,

բ. 2014 թվականից սկսված ՄՄՈՒԴ ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա

თსილემამբ ნერკორი կიტრაიმ, իսկ ზაյასտანի ზანრაպետության կառավարության որոշմամբ բարձրագույն կրթության մասնագիտությունների գծով հեռակա ուսուցման կրթության ձևը նախատեսված չլինելու դեպքում՝ երկրորդ կიტրայմ՝ առկա ուսուցմամբ»:

2) վճարովի հիմունքով՝ բացառությամբ ზայաստանի ზանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնություններ ունեցող հավակնորդի՝ սույն կարգով կրթությունը շարունակելու դեպքի:

**(2-րդ կետը խմբ. 11.06.20 N 921-Ն)**

3. Զավակնորդի կրթության շարունակման գործընթացն ապահովելու համար բուհի (բուհերի) և ՄՍՈՒՀ-ի միջև կնքվում է համագործակցության համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր) (բացառությամբ ԲՈՒՀ-ի և տվյալ հաստատության միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող համապատասխան ստորաբաժանման), որում ներառվում են նաև այն մասնագիտությունները՝ համապատասխան առարկայական տարրերություններով, որոնցով հնարավոր է շարունակել կրթությունը: Զանաձայնագիրն ըստ անհրաժեշտության կարող է վերանայվել:

4. Զավակնորդը բուհի և ՄՍՈՒՀ-ի միջև համագործակցության համաձայնագրի բացակայության դեպքում կրթությունը կարող է շարունակել իր նախընտրած բուհում՝ պահպանելով սույն կարգի 2-րդ, 13-րդ և 16-րդ կետերի պահանջները:

5. Պետական կամ ոչ պետական հավատագրնագրված բուհում կարող են սույն կարգով ուսումը շարունակել միայն պետական կամ ոչ պետական հավատարնագրված ՄՍՈՒՀ-ների հավակնորդները:

## **II. ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ**

6. Բուհը յուրաքանչյուր տարի, մինչև ապրիլի 15-ը, Զայաստանի ზանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն գրավոր ներկայացնում է բուհում հավակնորդների կրթության շարունակման համապատասխան տեղերի թիվը, որը չպետք է գերազանցի տվյալ մասնագիտությամբ նախատեսված և տվյալ ուսումնական տարվա համար հատկացված ընդունելության տեղերի 20 տոկոսը՝ հաշվի առնելով նաև բարձրագույն ուսումնական հաստատության տվյալ մասնագիտության գծով Զայաստանի ზանրապետության կառավարություն 2009 թվականի հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված կարգով Զայաստանի ზանրապետության **կրթության և գիտության «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի»** նախարարություն կողմից լիցենզիայով տրված սահմանային տեղերի թիվը:

**(6-րդ կետը փոփ. 11.06.20 N 921-Ն)**

7. ՄՍՈՒՀ-ը յուրաքանչյուր տարի, մինչև ապրիլի 1-ը, Զայաստանի ზանրապետության **կրթության և գիտության «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի»** նախարարություն գրավոր ներկայացնում է այն մասնագիտությունների ցանկը, որոնցով հավակնորդը կարող է շարունակել կրթությունը բուհում:

**(7-րդ կետը փոփ. 11.06.20 N 921-Ն)**

8. Զայաստանի ზանրապետության **կրթության և գիտության «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի»** նախարարությունը բուհերի և ՄՍՈՒՀ-ների կողմից ներկայացված հայտերի հիման վրա մինչև տվյալ տարվա մայիսի 10-ը հաստատում է համապատասխան բուհում կրթությունը շարունակելու համար հատկացված տեղերի թիվը՝ ըստ հաստատությունների և մասնագիտությունների, ինչպես նաև ՄՍՈՒՀ-ներում ուսուցանվող այն մասնագիտությունների ցանկը, որոնցով հավակնորդը կարող է շարունակել կրթությունը բուհում:

**(8-րդ կետը փոփ. 11.06.20 N 921-Ն)**

9. ՄՍՈՒՀ-ը, Զայաստանի ზանրապետության **կրթության և գիտության «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի»** նախարարության կողմից հաստատված ցանկի հիման վրա, երեք աշխատանքային օրվա ընթացքում, հրապարակում է ՄՍՈՒՀ-ից համապատասխան բուհերում կրթությունը շարունակելու համար հատկացված տեղերի թիվը՝ ըստ մասնագիտությունների և առարկայական տարրերությունների:

**(9-րդ կետը փոփ. 11.06.20 N 921-Ն)**

10. Հավակնորդը բուհ տեղափոխվելու մասին դիմումը ՄՄՌ-ի դեկավարին է ներկայացնում պետական ամփոփիչ ստուգման քննաշրջանից առնվազն 10 օր առաջ՝ նշելով նախընտրած բուհը և նախընտրելի մինչև 2 մասնագիտություն՝ առաջին հայտի գերակայության սկզբունքով:

11. Հավակնորդների դիմումների հիման վրա ՄՄՌ-ը հրավիրում է համապատասխան բուհից ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի հուլիսի 21-ի N 638-Ն հրամանով ձևավորվող պետական որակավորող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով: Ներկայացուցիչը չնախակցելու դեպքում բուհը պաշտոնապես տեղեկացնում է ՄՄՌ-ին: Պետական որակավորող հանձնաժողովի կազմում բուհի ներկայացուցիչը բացակայությունը հիմք չէ հավակնորդների՝ տվյալ բուհում սույն կարգով կրթությունը շարունակելու մերժման համար:

12. ՄՄՌ-ի պետական որակավորող հանձնաժողովը պետական ամփոփիչ ստուգման արդյունքների հիման վրա կազմում է արձանագրություն և հրապարակում սույն կարգով կրթությունը բուհում շարունակող հավակնորդների ցանկը:

13. Հավակնորդը կամ ՄՄՌ-Ը փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան բուհ մինչև տվյալ տարվա օգոստոսի 30-ը:

14. Փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

- 1) դիմում՝ ուղղված ռեկտորին.
- 2) ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի պատճենը.
- 3) արձանագրության պատճենը.
- 4) չորս լուսանկար (3x4 չափսի).

5) անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ ծննդյան վկայական մինչև 16 տարեկան հավակնորդի համար, կամ գինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական).

6) գինվորական գրքույկ կամ կցագրման վկայականի պատճենը (գորակոչային տարիքի հավակնորդից փաստաթուղթն ընդունվում է, եթե առկա է տարկետման իրավունք տվող, կամ չգորակոչվելու պատճառ հանդիսացող նշումը, իսկ առողջության պատճառով տարկետում ստացած անձանցից՝ հանրապետական գորակոչային հանձնաժողովի նշումը).

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում):

15. Դիմումները քննարկելու նպատակով բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):

16. Եթե բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխվող հավակնորդների թիվը գերազանցում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված տեղերի թիվը, ապա հանձնաժողովը հավակնորդների ընտրությունն իրականացնում է մրցութային հիմունքով՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

- 1) գերազանցության ավարտական փաստաթուղթ (գերազանցության դիպլոմ).
- 2) — ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ներդիրում առավել բարձր միավորների հանրագումար:

**«2) ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ներդիրի գնահատականների առավելագույն միջին թվաբանական (միջին թվաբանականը հաշվարկելիս անցում է կատարվում 20 միավորային համակարգի և այն կլորացվում է տասնորդականի ծշտությամբ)».**

3) պետական ամփոփիչ ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ:

**(16-րդ կետը խմբ. 11.06.20 N 921-Ն)**

17. Մրցույթն անցկացվում է մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 15-ը:

18. Բուհի ռեկտորը հանձնաժողովի մրցույթի արդյունքների հիման վրա մինչև տվյալ տարվա սեպ-



տեմբերի 20-ը տալիս է մրցույթով անցած ուսանողի ընդունման (կցագրման) հրաման, որին կցվում են առարկայական տարբերությունների ցանկը և դրանց հանձնման անհատական ժամանակացույցը: Առարկայական տարբերությունների հանձնման առավելագույն ժամկետը երեք ամիս է: Մրցույթով անցած ուսանողները բուհ են ներկայացնում ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի և դրա ներդիրի բնօրինակը:

19. Առարկայական տարբերությունները դրական հանձնելու դեպքում բուհի ռեկտորը երեք աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրում է ուսանողին, որից հետո 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության **Կորուրյան և գիտության «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություն** է ներկայացնում հաշվետվություն՝ համաձայն սույն կարգի ձևի:

**(19-րդ կետը փոփ. 11.06.20 N 921-Ն)**

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

ԶԱ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների (բուհի անվանումը) երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ կրթությունը շարունակելու վերաբերյալ

Անունը, ազգանունը, հայրանունը	Ուսումնառած ՄՄՈՒՀ-ի անվանումը	ՄՄՈՒՀ-ում ուսումնառած տարեթիվը	Ուսումնառած մասնաշտության անվանումը և որակավորումը	Բուհի համապատասխան մասնագիտության անվանումը և որակավորումը	Այլ տվյալներ

**(հավելվածը փոփ., իսմ. 11.06.20 N 921-Ն)**

ՀԱԾՎԱՌԱՎԱՆ

ՀԱԾՎԱՌԱՎԱՆ

ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ

ԲՆԱԳԱՎԱՐ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ՝ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀՂՈՒՄՆԵՐՈՎ՝ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ

Սկիզբը (հոդված 1-ից 103-ը)՝ «Գործ» ամսագրի 107-րդ համարներում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Ընդունված է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

#### ԳԼՈՒԽ 22

#### ՇԱՀՈՒԹԱԶԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՀԱՐԿՄԱՆ ԲԱԺԱՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

##### Հոդված 104. Շահութահարկով հարկման օբյեկտը

1. Շահութահարկով հարկման օբյեկտ է համարվում՝

- 1) ռեգիստրատուրայության կազմակերպությունների, ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների (այսուհետ՝ ռեգիստրատուրայությունների շահութահարկ վճարողներ) համար՝ ՀՀ աղբյուրներից և (կամ) ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա (այսուհետ՝ սույն բաժնում՝ ստացվող) համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների:

#### Պարզաբանում

#### **Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտները ենթակա են հարկման եկամտային հարկով:

- 2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդե-

ոի (բացառությամբ կենսաբոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը<sup>1</sup>.

3) ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և(կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և(կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ ՀՀ աղբյուրներից ստացվող անձնական եկամուտների:

### **Պարզաբանում**

#### **Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերաբերյալ**

Մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ ՀՀ աղբյուրներից ստացվող անձնական եկամուտները ենթակա են հարկման եկամտային հարկով:

**Հոդված105. Շահութահարկով հարկման բազան**

1.Շահութահարկով հարկման բազա են համարվում՝

1) ռեզիդենտ շահութահարկ վճարողների համար՝ հարկվող շահույթը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն.

### **Պարզաբանում**

#### **Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերաբերյալ**

Եթե ՀՀ-ում հաշվառված կազմակերպության 2020թ. արդյունքներով համախառն եկամուտը կազմում է 100 միավոր, իսկ Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումները՝ 60 միավոր, ապա 2020թ.շահութահարկով հարկման բազան կազմում է 40 միավոր (100-60):

2) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոններով անդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաբոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթերի հանրագումարը, որը որոշվում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած և հարկային մարմնի հետ համաձայնեցրած կարգով<sup>2</sup> <sup>3</sup>: Սույն կետի կիրառության հմաստով՝ ներդրումային ֆոնդի զուտ ակտիվներից չեն նվազեցվում ներդրումային ֆոնդի մասնակիցներին ներդրումային ֆոնդի ակտիվներից շահաբաժնի կամ նման այլ ձևով կատարված բաշխումների գումարները<sup>4</sup>.

3) մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող և(կամ) մշտական հաստատության միջոցով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ հարկվող շահույթը, որը որոշ-

1 Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի մասով, ուժի մեջ են մտնում 2017թ. հունվարի 1-ից (444-րդ հոդվածի, 4-րդ մաս):

2 ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011թ. դեկտեմբերի 6-ի «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ը հաստատելու մասին» №335-Ն որոշում:

3 ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011թ. դեկտեմբերի 6-ի «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ը հաստատելու մասին» №335-Ն որոշում:

4 Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի մասով, ուժի մեջ են մտել 2017թ. հունվարի 1-ից (444-րդ հոդվածի, 4-րդ մաս):



Վում է որպես Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումների դրական տարբերություն՝ հաշվի առնելով Օրենսգրքի 133-րդ հոդվածով սահմանված առանձնահատկությունները.

### Պարզաբանում

#### Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերաբերյալ

Եթե մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպության ՀՀ աղյուրներից ստացվող համախառն եկամուտը 2020թ. արդյունքներով կազմուն է 100 միավոր, իսկ Օրենսգրքի 110-րդ հոդվածով սահմանված նվազեցումները՝ 70 միավոր, ապա 2020թ. շահութահարկով հարկման բազան կազմում է 30 միավոր (100-70):

4) առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և(կամ) առանց մշտական հաստատության ՀՀ աղյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների (այսուհետ՝ առանց մշտական հաստատության Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամուտը.

### Պարզաբանում

#### Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ

Եթե առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպության ՀՀ աղյուրներից ստացվող համախառն եկամուտը 2020թ. արդյունքներով կազմուն է 100 միավոր, ապա 2020թ. շահութահարկով հարկման բազան կազմում է 100 միավոր:

5) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների՝ մշտական հաստատությանը չվերագրվող գործունեության և(կամ) եկամուտների մասով՝ Օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված համախառն եկամուտը:

(105-րդ հոդվածը փոփ. 21.12.17 ԴՕ-266-Ն)

### Պարզաբանում

#### Օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի վերաբերյալ

Եթե մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպության մշտական հաստատությանը չվերագրվող գործունեության ՀՀ աղյուրներից ստացվող համախառն եկամուտը 2020թ. արդյունքներով կազմուն է 80 միավոր, ապա 2020թ. շահութահարկով հարկման բազան կազմում է 80 միավոր:

### Հոդված 106. Շահութահարկով հարկման բազայի որոշման սկզբունքները

#### 1. Շահութահարկովիարկման բազան որոշելիս՝

1) հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը<sup>5</sup> և ֆինանսական հաշվետվությունների<sup>6</sup> պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով<sup>7</sup> սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե Օրենսգրքի սույն բաժնով և Օրենսգրքի ընդիհանուր մասով դրանց կիրառության առանձնահատկություններ սահմանված չեն.

<sup>5</sup> «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք:

<sup>6</sup> ՀՀ կառավարության 2010թ. մարտի 11-ի «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» N 235-Ն որոշում:

<sup>7</sup> ՀՀ կառավարության 2010թ. սեպտեմբերի 16-ի «Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը հրապարակելու մասին» N1209-Ն որոշում:

2) ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական արժեքով, բացառությամբ օրենքով սահմանված կարգով վերագնահատված ակտիվների և պարտավորությունների, որոնք հաշվի են առնվում վերագնահատված արժեքով: Սույն կետի կիրառության իմաստով՝ ակտիվները (և(կամ) պարտավորությունները համարվում են օրենքով սահմանված կարգով վերագնահատված, եթե վերագնահատումը կատարվել է այն օրենքին համապատասխան, որով սահմանված է, որ ակտիվների (և(կամ) պարտավորությունների վերագնահատումն իրականացվում է շահութահարկով հարկման բազայի որոշման կամ շահութահարկի հաշվարկման նպատակով.

3) ձեռք բերված ակտիվների գոտով ձեռքբերումից հետո Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերին համապատասխան հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների ճշգրտումները (ավելացումները, նվազեցումները) այդ ակտիվների սկզբնական կամ հաշվեկշռային արժեքները չեն փոփոխում.

### Պարզաբանում

#### Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վերաբերյալ

Եթե ՀՀ-ում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպության կողմից 01.01.2020թ. ձեռք է բերվել 100 միավոր սկզբնական արժեքով ակտիվ, որը 01.01.2021թ.-ից սկսել է օգտագործվել ԱԱՀ-ից ազատված գործարների համար, ապա շահութահարկով հարկման առումով այդ ակտիվի սկզբնական արժեքը չի փոփոխվում՝ անկախ ԱԱՀ գումարների ճշգրտման հանգամանքից:

4) հարկային հակողության արդյունքում հայտնաբերված ակտիվների պակասորդի մասով հարկման բազայի ավելացում կամ պակասեցում չի կատարվում.

### Պարզաբանում

#### Օրենսգրքի 106-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերաբերյալ

Եթե ՀՀ-ում հաշվառված կազմակերպության կողմից հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ 2020թ. արդյունքներով ակտիվների հարկման բազան 100 է, սակայն հարկային հակողության արդյունքում հայտնաբերվել է, որ կազմակերպության կողմից կա ակտիվների պակասորդ, որը կազմում է 25 միավոր, ապա ակտիվների հարկման բազան չի փոփոխվում՝ անկախ 25 միավոր ակտիվների պակասորդի հանգամանքից:

5) հաշվի են առնվում միայն Օրենսգրքով սահմանված պահուստների ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները:

### Հոդված 107. Եկամուտների ստացման աղբյուրները

1. Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ են համարվում՝

1) ձեռնարկատիրական եկամուտները՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում.

2) պասիվ եկամուտները՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում:

Սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված եկամուտներում ներառվում են նաև՝

1) ռեգիստրատուրայի վճարողին կամ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող ոչ ռեգիստրատուրայի վճարողին Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծառայությունների մատուցումից ոչ ռեգիստրատուրայի ստացվող եկամուտները՝ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում.

2) Օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եկամուտները.

3) այլ եկամուտները՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կիրառության նպատակով ձեռնարկատիրական եկամուտները համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե՝



1) ապրանքի մատակարարման վայրը, Օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, համարվում է ՀՀ-ը.

### **Պարզաբանում**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի վերաբերյալ**

Եթե առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեգիստրատոր կազմակերպությունը, իրեն սեփականության իրավունքով պատկանող ապրանքը ՀՀ տարածքում օտարում է ՀՀ-ում հաշվառված կազմակերպությանը, ապա այդ ապրանքի մատակարարման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը:

2) աշխատանքը փաստացի կատարվել կամ ծառայությունը փաստացի մատուցվել է ՀՀ տարածքում անկախ Օրենսգրքի 39-րդ հոդվածի դրույթներից: Մասնավորապես, սույն բաժնի կիրառության իմաստով, համարվում է, որ աշխատանքը փաստացի կատարվել կամ ծառայությունը փաստացի մատուցվել է ՀՀ տարածքում, եթե՝

ա. շինարարության նախապատրաստման և իրականացման (ներառյալ՝ հետախուզման, նախագծման, դիզայներական, մոնտաժային, հեղինակային և տեխնիկական վերահսկողության), անշարժ գույքի նորոգման, վերականգնման և կանաչապատման, ինչպես նաև անշարժ գույքի առք ու վաճառքի գործակալների ու փորձագետների կողմից կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները (ներառյալ՝ անշարժ գույքի գնահատման ծառայությունները) անմիջականորեն կապված են ՀՀ տարածքում գտնվող կամ կառուցվող անշարժ գույքի հետ,

### **Օրինակ**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ**

Եթե կազմակերպությունն իրականացնում է ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույքի հետ անմիջականորեն կապված դիզայներական աշխատանքներ, ապա դիզայներական աշխատանքները համարվում են մատուցված ՀՀ-ում, քանի որ անշարժ գույքը գտնվում է ՀՀ-ում:

բ. բեռների և(կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայությունը (բացառությամբ փոստային ծառայության և օդային տրանսպորտով բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության) փաստացի մատուցվում է ՀՀ տարածքում: Այն դեպքում, եթե բեռների և(կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության միայն մի մասն է փաստացի մատուցվում ՀՀ տարածքում, և ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում առանձնացված է ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը, ապա ՀՀ աղյուրներից ստացվող եկամուտ է համարվում միայն այդ մասին համապատասխանող եկամուտը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը համարվում է առանձնացված, եթե այդ փաստաթղթում առանձին նշված է սահմանային բնակավայրից (այդ թվում՝ հարևան պետության տարածքում գտնվող) մինչև ՀՀ տարածքում գտնվող նշանակման վայր (կամ հակառակը) բեռների և (կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության դիմաց հատուցումը: Սույն ենթակետի կիրառության իմաստով՝ տրանսպորտային ծառայություն է համարվում նաև այլ կազմակերպությունների և(կամ) ֆիզիկական անձանց միջոցով (ներգրավմամբ) բեռների և (կամ) ուղևորների փոխադրման կազմակերպման միջնորդական գործունեությունը,

### **Օրինակ N 1**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի վերաբերյալ**

Եթե կազմակերպությունը ցամաքային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայություն է իրականացնում Երևանից Մեղրի, ապա այս տրանսպորտային ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում:

### Օրինակ N2

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի վերաբերյալ

Եթե կազմակերպությունը ցանաքային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայություն է իրականացնում Փարիզից Երևան, ընդ որում, ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում առանձնացված է ՀՀ տարածքում (Բագրատաշեն-Երևան) փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը, ապա ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտ է համարվում միայն Բագրատաշեն-Երևան ճանապարհահատվածի համար վճարվող եկամուտը:

### Օրինակ N3

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի վերաբերյալ

Եթե կազմակերպությունը ցանաքային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայություն է իրականացնում Փարիզից Երևան, ընդ որում, ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում առանձին նշված է հարևան պետության տարածքում գտնվող սահմանային բնակավայրից (Օրինակ՝ Սադամիլո) մինչև ՀՀ տարածքում գտնվող նշանակման վայր (Երևան) բեռների փոխադրման տրանսպորտային ծառայության դիմաց հատուցումը, ապա ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտ է համարվում միայն Սադամիլո-Երևան ճանապարհասխանող եկամուտը:

### Օրինակ N4

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի վերաբերյալ

Եթե կազմակերպությունը ցանաքային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայության միջնորդություն է իրականացնում Վանաձորից Երևան, ապա այս ծառայությունը Օրենսգրքի սույն կետի կիրառման առումով համարվում է տրանսպորտային ծառայություն և նշված ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում:

գ. փոստային ծառայությունը կամ օդային տրանսպորտով բեռների և(կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայությունը փաստացի մատուցվում է ՀՀ տարածքում: Այն դեպքում, եթե փոստային ծառայության կամ օդային տրանսպորտով բեռների և(կամ) ուղևորների փոխադրման տրանսպորտային ծառայության միայն մի մասն է փաստացի մատուցվում ՀՀ տարածքում, և Կառավարության լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքում առանձնացված է ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության ծավալը՝ արտահայտված համապատասխան չափման միավորներով, ապա ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտը որոշվում է ծառայության դիմաց ընդհանուր հատուցման և ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության ծավալի՝ ծառայության ընդհանուր ծավալում ունեցած տեսակարար կշռի արտադրյալի չափով, բացառությամբ սույն կետի «ե» ենթակետով սահմանված դեպքերի,

### Օրինակ N1

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի վերաբերյալ

Եթե կազմակերպությունն օդային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայություն է իրականացնում Երևանից Օսլո, ապա այս տրանսպորտային ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում, եթե Կառավարության լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքում ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության ծավալը առանձնացված չէ:

### Օրինակ N2

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի վերաբերյալ

Եթե կազմակերպությունն օդային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայություն է իրականացնում Երևանից Օսլո, ընդ որում, տրանսպորտային ծառայության միայն մի

մասն է փաստացի մատուցվում ՀՀ տարածքում, և Կառավարության լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքում առանձնացված է ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության ծավալը՝ արտահայտված համապատասխան չափման միավորներով, շահութահարկով հարկման առումով տվյալ օդային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայության միայն փաստացի ՀՀ տարածքում մատուցված ծառայությունն է համարվում մատուցված Հայաստանի Հանրապետությունում:

### **Օրինակ N3**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի վերաբերյալ**

Եթե կազմակերպությունն օդային տրանսպորտով բեռների փոխադրման տրանսպորտային ծառայությունն է իրականացնում Երևանից Օսլո, որի ծավալը 100 է, իսկ Կառավարության լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքում առանձնացված ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության ծավալը 40 է, ընդ որում, ծառայության դիմաց ընդհանուր հատուցումը տվյալ դեպքում 200 միավոր է, ապա ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտը կազմում է 80 միավոր ( $40/100 \times 200$ ):

դ. սույն կետի «բ» և «գ» ենթակետերով սահմանված ծառայությունների հետ ուղղակիորեն կապված ապրանքների փաթեթավորման, բեռնման, բեռնաթափման, ուղեկցման և համանման այլ աշխատանքների կատարման և(կամ) ծառայությունների մատուցման ժամանակ ապրանքները փաստացի գտնվել են Հայաստանի Հանրապետության տարածքում,

### **Օրինակ**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «դ» ենթակետի վերաբերյալ**

Եթե կազմակերպությունն ցանաքային տրանսպորտով Երևանից Օսլո բեռների փոխադրման տրանսպորտային ծառայության հետ ուղղակիորեն կապված՝ ապրանքների փաթեթավորման ծառայությունն է մատուցում, ընդ որում, ապրանքների փաթեթավորման ժամանակ ապրանքները փաստացի գտնվել են ՀՀ տարածքում, ապա փաթեթավորման ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում:

ե. փոստային ծառայությունը սկսվում է ՀՀ տարածքում (այն դեպքում, եթե ՀՀ տարածքում սկսվող փոստային ծառայությունն ավարտվում է ՀՀ տարածքից դուրս, ապա անկախ ծառայության մատուցման գործարքին վերաբերող հաշվարկային փաստաթղթերում ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը առանձնացված լինելու հանգամանքից, Հայաստանի Հանրապետությունում գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտ է համարվում գործարքի դիմաց հատուցման ողջ գումարը),

### **Օրինակ**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ե» ենթակետի վերաբերյալ**

Եթե կազմակերպությունը փոստային ծառայությունն է իրականացնում Երևանից Օսլո, ընդ որում, ծառայության դիմաց ընդհանուր հատուցումը կազմում է 100 միավոր, ապա փոստային տրանսպորտային ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում, և ՀՀ-ում գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտ է համարվում գործարքի դիմաց հատուցման ողջ գումարը՝ 100 միավոր, անկախ հաշվարկային փաստաթղթերում ՀՀ տարածքում փաստացի մատուցվող ծառայության դիմաց հատուցումը առանձնացված լինելու հանգամանքից:

գ. հեռահաղորդակցության ծառայությունները մատուցվել են հեռահաղորդակցության օպերատորների կողմից՝ ՀՀ տարածքում գտնվող և (կամ) գրանցված հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ,

է. տեղեկատվությունը հաղորդվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հասցեից և(կամ) Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող հասցեին,

ը. գովազդի պատրաստումը և(կամ) տարածումը կատարվում է ՀՀ տարածքում,

### Օրինակ

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ը» ենթակետի վերաբերյալ**

Եթե կազմակերպությունը գովազդ է պատրաստում և (կամ) տարածում ՀՀ տարածքում, ապա այդ ժառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում և ՀՀ-ում գտնվող աղբյուրներից ստացվող եկամուտ է համարվում գործարքի դիմաց հատուցման գումարը:

թ. առողջուրական ծառայություն ստացող անձը օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում.

### Օրինակ

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ը» ենթակետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է ՀՀ-ում և առողջուրական ծառայություն է ստանուն իտալիայում գրանցված Բ կազմակերպությունից, ապա այդ առողջուրական ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում, քանի որ ծառայություն ստացողը հաշվառված է ՀՀ-ում:

3) այդ եկամուտները ստացվել են Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող միջնորդական գործունեություն, ապա այդ միջնորդական գործունեության հետ կապված եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:

### Օրինակ

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Իսպանիայում, սակայն ՀՀ տարածքում իրականացնում է միջնորդական գործունեություն, ապա այդ միջնորդական գործունեության հետ կապված եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:

4) այդ եկամուտները ստացվել են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում իր մշտական հաստատությանը կառավարման, ֆինանսական կամ ապահովագրական ծառայությունների մատուցումից:

### Օրինակ

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Սլովենիայում, սակայն ունի Բ մշտական հաստատություն ՀՀ-ում, ապա Ա կազմակերպության կողմից Բ-ին մատուցված կառավարման ծառայություններից ստացված եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:

Եթե ոչ ռեզիդենտ շահութահարկվճարողի կատարած աշխատանքների կամ մատուցված ծառայությունների բնույթով պայմանավորված՝ հնարավոր չէ առանձնացնել ՀՀ տարածքում կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մասը, կամ եթե հնարավոր չէ եկամուտը վերագրել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներին, ապա այդ աշխատանքների կատարումից կամ ծառայությունների մատուցումից ստացվող եկամուտներն ամբողջությամբ համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ:

### Օրինակ

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Իսպանիայում, սակայն միջնորդական ծառայություն է մատուցում ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանը և հնարավոր չէ առանձնացնել ՀՀ տարածքում մատուցված ծառայության մասը, ապա այդ միջնորդական ծառայության հետ կապված եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:



3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառության նպատակով պասիվ եկամուտները համարվում են Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե՝

1) շահաբաժնները ստացվում են ռեզիդենտ կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայտաժնից) կամ Օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված համատեղ գործունեությունից.

#### **Օրինակ**

##### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է իսպանիայում և ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցությունից ստանում է շահաբաժն, ապա այդ պասիվ եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:

2) տոկոսները ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից).

#### **Օրինակ**

##### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է իսպանիայում և ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից ստանում է տոկոսներ, ապա այդ տոկոսները համարվում են ՀՀ-ից ստացվող:

3) ռոյալթիները ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջից, նոտարից).

#### **Օրինակ**

##### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի վերաբերյալ**

Եթե կազմակերպությունը հաշվառված է իսպանիայում և ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունից ստանում է ռոյալթի, ապա ռոյալթի հետ կապված եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:

4) Վարձակալական վճարը կամ սերվիսուտի վճարը ստացվում է՝

ա. ՀՀ տարածքում գտնվող անշարժ գույքի տիրապետման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց,

#### **Օրինակ**

##### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է իսպանիայում, ՀՀ տարածքում ունի անշարժ գույք, որը տիրապետման իրավունքով տրամադրում է ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանը և այդ գույքի տիրապետման իրավունքով տրամադրումից ստանում է եկամուտներ, ապա այդ եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:

բ. այնպիսի շարժական գույքի (բացառությամբ օդանավերի) տիրապետման և (կամ) օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց, որը վարձակալության պայմանագրի գործողության ժամկետում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է (ենթակա է գրանցման) ՀՀ-ում, կամ որը վարձակալության պայմանագրի կնքման պահին գտնվում է ՀՀ տարածքում.

#### **Օրինակ**

##### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է իսպանիայում, ունի ՀՀ-ում գրանցված մեքենա, որը վարձակալությամբ տրամադրում է ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանը և այդ գույքի վարձակալության տրամադրումից ստանում է եկամուտներ, ապա այդ եկամուտները համարվում են ՀՀ-ից ստացվող:

5) ոչ ռեգիստրատուրական վճարողի ակտիվների (բացառությամբ բաժնետոմսերի և ներդրում վկայող այլ արժեքերի) արժեքի հավելածը ստացվում է ՀՀ տարածքում գտնվող ակտիվների օտարումից (բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվների արժեքի հավելածը մշտական հաստատության ձեռնարկատիրական գործունեության արդյունք է), իսկ բաժնետոմսերի և ներդրում վկայող այլ արժեքերի պարագայում՝ եթե արժեքի հավելածը ստացվում է ռեգիստրատուրական կազմակերպության բաժնետոմսերի կամ այդ կազմակերպության թողարկած՝ ներդրում վկայող այլ արժեքերի օտարումից: Ընդ որում՝

### Օրինակ

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի վերաբերյալ

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Լատվիայում, ՀՀ տարածքում ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք, որը օտարում է ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանը, ապա այդ ակտիվի հավելածը համարվում է ՀՀ-ից ստացվող:

ա. ակտիվների՝ ՀՀ ներմուծման, տեղափոխման և (կամ) տեղակայման փաստը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում ակտիվների սկզբնական արժեքը որոշվում է հաշվի առնելով վերջիններիս ներմուծմանը վերաբերող փաստաթղթերում (ներմուծման մաքսային հայտարարագիր կամ ներմուծման հարկային հայտարարագիր), տեղափոխմանը և(կամ) տեղակայմանը վերաբերող հաշվառկային փաստաթղթերում նշված արժեքը, եթե բացակայում են սույն կետի «բ» ենթակետով սահմանված ակտիվների ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերը,

### Օրինակ N1

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ

Եթե ակտիվի ձեռքբերման մասով առկա չէ ձեռքբերման հաշվարկային փաստաթուղթ, ապա ակտիվի սկզբնական արժեքը որոշվում է ներմուծմանը վերաբերող փաստաթղթերում նշված արժեքից:

### Օրինակ N 2

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ

Եթե ակտիվի ձեռքբերման մասով առկա է և ձեռքբերման հաշվարկային փաստաթուղթ, և ներմուծմանը վերաբերող փաստաթուղթ, ապա ակտիվի սկզբնական արժեքը որոշվում է ակտիվի ձեռքբերման հաշվարկային փաստաթղթի հիման վրա:

բ. ակտիվների ձեռքբերման փաստը հաստատող հաշվարկային փաստաթղթերի առկայության դեպքում ակտիվների սկզբնական արժեքը որոշվում է հաշվի առնելով վերջիններիս ձեռքբերմանը, տեղափոխմանը և(կամ) տեղակայմանը վերաբերող հաշվարկային փաստաթղթի հիման վրա:

### Օրինակ

#### Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «բ» ենթակետի վերաբերյալ

Եթե ակտիվի ձեռքբերման մասով առկա է հաշվարկային փաստաթուղթ, որի մեջ նշված է ակտիվի ձեռքբերման արժեքը, ապա այն համարվում է ակտիվի սկզբնական արժեքը:

գ. մաշվածության կամ ամորտիզացիայի (այսուհետ՝ ամորտիզացիա) ենթակա ակտիվների օտարման դեպքում ակտիվների օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելածը հաշվարկվում է հաշվի առնելով օտարման պահին դրանց հաշվեկշռային արժեքը, որի համար հիմք է հանդիսանում օտարողի տված փաստաթուղթը,

## **Օրինակ**

### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «գ» ենթակետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը Բ կազմակերպությանն օտարում է անշարժ գույք, որի սկզբնական արժեքը ձեռքբերման փաստաթղթի համաձայն 60 միավոր է, իսկ օտարման պահին օտարողի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթի համաձայն հաշվեկշռային արժեքը՝ 100 միավոր, ապա տվյալ ակտիվի հավելածը կազմում է 40 (100-60):

Դ. օրենքով սահմանված կարգով վերագնահատված ակտիվների օտարման դեպքում ակտիվների օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելածը հաշվարկվում է՝ հաշվի առնելով դրանց վերագնահատված արժեքը, եթե այդ վերագնահատման արդյունքները հաշվի են առնվում շահութահարկով հարկման բազան կամ շահութահարկը որոշելիս,

## **Օրինակ**

### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «դ» ենթակետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը Բ կազմակերպությանն օտարում է անշարժ գույք, որի սկզբնական արժեքը ձեռքբերման փաստաթղթի համաձայն 60 միավոր է, մինչև ակտիվի վերագնահատումը հաշվեկշռային արժեքը կազմում է 100 միավոր, իսկ տվյալ ակտիվի վերագնահատումից հետո հաշվեկշռային արժեքը կազմում է 120 միավոր, ապա տվյալ ակտիվի հավելածը հաշվարկվում է հաշվի առնելով ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքը, որը կազմում է 60 (120-60) միավոր:

Ե. արտարժույթի փոխանակման դեպքում ակտիվների արժեքի հավելածը հաշվարկվում է որպես ՀՀ դրամով ստացված դրամական միջոցների և դրանց դիմաց վճարված արտարժույթի՝ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով ՀՀ դրամով վերահաշվարկված գումարի դրական տարբերություն,

## **Օրինակ**

### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «ե» ենթակետի վերաբերյալ**

Եթե Ա և Բ կազմակերպությունների միջև տեղի է ունեցել արտարժույթի փոխանակում, ընդ որում, Ա կազմակերպությունը Բ կազմակերպությունից ստացել է 1 000 000 ՀՀ դրամ, որի դիմաց տրամադրել է արտարժույթ, որը ՀՀ դրամով վերահաշվարկված կազմում է 980 000 դրամ, ապա տվյալ դեպքում ակտիվի արժեքի հավելածը կազմում է 20 000 դրամ:

Գ.ոչ ռեզիդենտի կողմից օտարվող ակտիվների մասով սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում ակտիվների արժեքի հավելած է համարվում ոչ ռեզիդենտի կողմից օտարվող ակտիվների ամբողջ արժեքը.

## **Օրինակ**

### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի «գ» ենթակետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Լատվիայում, և վերջինիս կողմից ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանն օտարվում է ակտիվ՝ 100 միավոր արժեքով, որը ձեռք է բերվել 50 միավոր արժեքով, սակայն ձեռքբերման բոլոր փաստաթղթերը բացակայում են, ապա տվյալ գործարքի մասով ակտիվի հավելած է համարվում 100 միավորը:

6) այլ պասիվ եկամուտները ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ծեռնարկատիրոջից, նոտարից):

### **Օրինակ**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Վրաստանում և այլ պասիվ եկամուտներ է ստանում ՀՀ ռեզիդենտ Բ կազմակերպությունից, ապա այդ պասիվ եկամուտները համարվում են ստացված ՀՀ-ից, քանի որ Բ կազմակերպությունը հաշվառված է ՀՀ-ում:

4. Սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության 1-ին կետի կիրառության նպատակով ռեզիդենտ շահութահարկ վճարողին կամ մշտական հաստատության միջոցով ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողին ՀՀ տարածքից դուրս ծառայությունների մատուցումից ոչ ռեզիդենտի կողմից ստացվող եկամուտները համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե այդ եկամուտները ստացվում են խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, կառավարման, փորձագիտական, մարկետինգային, գովազդային, թարգմանչական, ինժեներական և համամանայլ ծառայությունների մատուցումից:

### **Օրինակ**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Լատվիայում, ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանը մատուցում է խորհրդատվական ծառայություններ, ապա այդ ծառայությունը համարվում է մատուցված ՀՀ-ում, և այդ ծառայությունների մատուցումից ոչ ռեզիդենտի կողմից ստացվող եկամուտները համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ:

5. Սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության 3-րդ կետի կիրառության նպատակով սույն հոդվածի 2-4-րդ մասերում չնշված այլ եկամուտները համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ, եթե դրանք ստացվում են ռեզիդենտ կազմակերպությունից կամ մշտական հաստատությունից կամ ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձից (այդ թվում՝ անհատ ծեռնարկատիրոջից, նոտարից), բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

### **Օրինակ**

#### **Օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ մասի վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Լատվիայում, ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանը մատուցում է ծառայություն, որից ստանում է սույն հոդվածի 2-4-րդ մասերում չնշված այլ եկամուտներ, ապա ոչ ռեզիդենտի կողմից ստացվող այդ եկամուտները համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ:

Եթե հնարավոր չէ սույն մասում նշված այլ եկամուտը վերագրել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներին, ապա այդ եկամուտներն ամբողջությամբ համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող եկամուտներ:

**Օրինակ**  
**Օրենսգրքի 107-րդ հոդվածի 5-րդ մասի վերջին պարբերության վերաբերյալ**

Եթե Ա կազմակերպությունը հաշվառված է Լատվիայում, ՀՀ-ում հաշվառված Բ կազմակերպությանը մատուցում է ծառայություն, որից ստացվող Եկամուտները հնարավոր չեն վերագրել ՀՀ-ից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող Եկամուտներին, ապա այդ Եկամուտներն ամբողջությամբ համարվում են ՀՀ աղբյուրներից ստացվող Եկամուտներ:

6. Այն Եկամուտները, որոնք, սույն հոդվածի 1-5-րդ մասերի համաձայն, չեն համարվում ՀՀ աղբյուրներից ստացվող Եկամուտներ, համարվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող Եկամուտներ:

**(107-րդ հոդվածը փոփ. 23.03.18ԴՕ-261-Ն)**





# ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՖՀՍՍ-ՆԵՐՈՒՄ

### ՆՅՈՒԹՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է «ԳՈՐԾՔ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

**Բաժինը վարում է ՖՀՍՍ-ների  
միջազգային մասնագետ Ավետիք Մովսիսյանը**

Ավետիք Մովսիսյանը դասավանդման և խորհրդատվության մեջ փորձառությամբ ՖՀՍՍ (Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների) մասնագետ է:

Նա պարբերաբար անցկացնում է ՖՀՍՍ-ների խորացված դասընթացներ գլխավոր հաշվապահների, առլիտորների և այլ ֆինանսական մասնագետների համար: Շուրջ 15-ամյա դասավանդման կարիերայի ընթացքում Ավետիք Մովսիսյանն անցկացրել է ՖՀՍՍ-ների դասընթացներ Հայաստանում գործող շատ առաջատար կազմակերպությունների ֆինանսական մասնագետների համար:

Ավետիք Մովսիսյանը համատեղության կարգով որպես դասախոս աշխատում է մի շարք ուսումնական կենտրոններում և որպես խորհրդատու՝ մի շարք առլիտորական ընկերություններում:

2009թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ավետիք Մովսիսյանը հրավիրվել է որպես ՖՀՍՍ-ների պաշտոնական թարգմանության խմբի փորձագետ: Նա նաև հեղինակել է ՖՀՍՍ-ներով հաշվապահական հաշվառում վարելուն առնչվող տարրեր հոդվածներ և գրքույկներ:

Որպես իր մասնագիտական ունակությունների հաստատում Ավետիք Մովսիսյանը 2011թ.-ին ACCA-ի կողմից ստացել է ՖՀՍՍ-ների մասնագետի որակավորում (DipIFR) և հանդիսանում է Հայաստանում այդ որակավորումն ունեցող առաջին մասնագետներից մեկը:

**Դողվածն առաջին անգամ տպագրվում է «Գործք» ամսագրում**

**(Սկիզբ՝ 121-րդ, 122-րդ, 124-րդ և 125-րդ համարներում)**

### ՖՀՍՍ-16 ՎԱՐԶԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

#### Գլուխ 10

#### Վարձակալության վերափոխումները

Երբ գործող վարձակալության պայմաններում կատարվում է փոփոխություն (ՖՀՍՍ 16-ում անվանվում է վարձակալության վերափոխում), ապա այն պետք է հաշվառել որպես առանձին վարձակալություն, եթե ավելանում է օգտագործման ենթակա ակտիվ, և վարձավճարի արժեքի աճը համապատասխանում է այդ նոր ակտիվի առանձին վարձակալությանը բնորոշ շուկայական վարձավճարին:

## Վարձակալության վերափոխումը վարձակալի մոտ

Ըստ նախորդ պարբերության առանձին վարձակալություն չհանարվող վերափոխումն արտացոլելու համար անհրաժեշտ է տվյալ պահին կատարել վարձակալության գծով գնահատումների առաջընթաց վերանայում: Վերանայվում են վարձակալության ժամկետը, հատուցման գումարը, վարձակալության գծով պարտավորությունը (վերանայված տոկոսադրույթով) և օգտագործման իրավունքի ակտիվը: Եթե վարձակալության վերափոխման արդյունքում պարտավորությունն ավելանում է, ապա նույն չափով ավելանում է նաև օգտագործման իրավունքի ակտիվը, իսկ եթե պարտավորությունը նվազում է, ապա պետք է օգտագործման իրավունքի ակտիվը նվազեցնել պակասող իրավունքին վերաբերող մասով՝ տարբերությունները ճանաչելով շահույթ/վնասում:

**Օրինակ 12 –** Գրասենյակային տարածքի գծով երկարաժամկետ վարձակալության օգտագործման իրավունքի ակտիվի մնացորդը 30 մլն դրամ է, իսկ պարտավորության մնացորդը՝ 40 մլն դրամ: Վարձակալության մնացորդային չեղյալ չհանարվող ժամկետը 5 տարի է, վարձակալության ավարտին ակտիվի ձեռքբերման օպցիոն չկա, իսկ երաշխավորված մնացորդային արժեքը կազմում է 6 մլն դրամ: Վարձակալված տարածքը բաղկացած է 3 հատ նմանատիպ սենյակներից:

ա) Պայմանագրում կատարվում է լրացում, որով վարձակալված տարածքին ավելանում է ևս 1 սենյակ և վարձավճարն ավելանում է այնքանով, որքան կկազմեր այդ սենյակի շուկայական վարձակալության արժեքը առանձին վարձակալելու դեպքում:

Այս դեպքում նոր սենյակի վարձակալությունը կիաշվառվի առանձին վարձակալական գործարք:

բ) Պայմանագրում կատարվում է լրացում, որով վարձակալված տարածքին ավելանում է ևս 1 սենյակ և վարձավճարն ավելանում է այնքանով, որքան կկազմեր այդ սենյակի շուկայական վարձակալության արժեքի 50%-ը առանձին վարձակալելու դեպքում:

Այս դեպքում կատարվում է վարձակալության գծով պարտավորության վերահաշվարկ՝ վերանայված տոկոսադրույթով: Վերանայված պարտավորության անվանական արժեքը բաղադրիչներն են մնացած 5 տարվա վարձավճարները, նոր սենյակի համար ավելացվող վարձավճարները, ինչպես նաև երաշխավորված մնացորդային արժեքը, որի գումարը հնարավոր է՝ կողմերի պայմանավորվածությամբ փոխվի, քանի որ ավելանում է զբաղեցված տարածքը:

Ենթադրենք՝ վերահաշվարկված պարտավորությունը հավասար է 47 մլն դրամի: Համապատասխանաբար,  $47-40=7$  մլն դրամով կապելանա նաև օգտագործման իրավունքի ակտիվը:

գ) Պայմանագրում կատարվում է լրացում, որով վարձակալված տարածքից հանվում է 1 սենյակ, պարբերական վարձվաճարը պակասում է 30%-ով, վարձակալության ժամկետը նվազեցվում է 2 տարով և երաշխավորված մնացորդային արժեքը աճում է 3 մլն դրամով:

Պարտավորությունը վերահաշվարկվում է ըստ նոր դրույքների՝ վերանայված տոկոսադրույթով: Ենթադրենք՝ վերահաշվարկված պարտավորությունը կազմում է 26 մլն դրամ, նվազում է 14 մլն դրամով:

Օգտագործման իրավունք ակտիվի նախնական հաշվեկշռային արժեքը 30 մլն դրամ գումարը իր մեջ մարմնավորում է երաշխավորված մնացորդային արժեք 6 մլն դրամը, և մնացած 24 մլն դրամը համարվում է 3 սենյակը 5 տարի օգտագործելու իրավունք:

Այսինքն՝ 1 սենյակը 1 տարի օգտագործելու իրավունքը ակտիվում ներառված է 1.6 մլն դրամով: Վարձակալության վերափոխման արդյունքում մնում է 2 սենյակը 3 տարի օգտագործելու իրավունք, ինչպես նաև 9 մլն դրամ երաշխավորված մնացորդային արժեք՝  $2 \times 3 \times 1.6 + 9 = 18.6$  մլն դրամ:

Այսպիսով՝ պարտավորությունը նվազում է 14 մլն դրամով, իսկ ակտիվը  $30 - 18.6 = 11.4$  մլն դրամով:  $14 - 11.4 = 2.6$  մլն դրամի չափով կճանաչվի եկամուտ վարձակալության վերափոխումից:

Եթե վարձակալության պայմանների փոփոխության արդյունքում կարճաժամկետ վարձակալությունը դառնում է երակարաժամկետ, ապա տվյալ պահից պետք է հաշվառումն իրականացնել որպես երկարաժամկետ վարձակալություն: Սակայն, եթե պայմանների փոփոխության արդյունքում երկարաժամկետ վարձակալությունն է դառնում կարճաժամկետ, ապա կազմակերպությունը պետք է շարունակի նույն

«Երկարաժամկետ» սկզբունքով վարձակալության հաշվառումը, քանի որ, ինչպես նկարագրված է սույն հոդվածի 7-րդ գլխում, կարճաժամկետ վարձակալության պարզեցված հաշվառումը պարտադրված չէ, այլ ընդամենը ՖՀՍՍ16-ի կողմից տրված լրացուցիչ հնարավորություն է:

## Վարձակալության վերափոխումը վարձատուի մոտ

Եթե վարձակալությունը մինչ վերափոխվելը համարվում էր գործառնական վարձակալություն, ապա հաշվապահական հաշվառման տեսակետից այն դիտարկվում է որպես վերափոխման ամսաթվին կազմված նոր պայմանագիր՝ վերափոխված պայմաններով: Այդ պահին իին վարձակալության գծով ստացված կանխավճարի կամ դեբիտորական պարտքի մնացորդը համարվում է որպես նոր վարձակալության վարձավճարի բաղադրիչ:

Եթե վերափոխման արդյունքում ֆինանսական վարձակալությունը դառնում է գործառնական, ապա ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքը ապահնաչփում է և նույն չափով ճանաչվում է համապատասխան ակտիվը (օրինակ՝ իինական միջոց կամ ներդրումային գույք):

Եթե վերափոխման արդյունքում ֆինանսական վարձակալությունը շարունակում է մնալ որպես այդպիսին, ապա կիրառվում է ֆինանսական գործիքներ ՖՀՍՍ 9-ը, որը նշանակում է որ պետք է վերաչափել ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքը վերահաշվարկելով վերանայված հոսքերի (վարձակալությունում համախառն ներդրումների) ներկա արժեքը նույն վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, իսկ տարբերությունը ճանաչել շահույթ կամ վճառ:

Ֆինանսական վարձակալության վերափոխման արդյունքում վարձակալության տեսակը որոշելու համար դիտարկվում են նոր պայմանները վարձակալության մեկնարկի, այլ ոչ թե վերափոխման ամսաթվի դրությամբ:

**Օրինակ 13 –**Կազմակերպությունը 20 տարի տնտեսական ծառայություն ունեցել ակտիվը հանձնում է վարձակալության 16 տարով: 12-րդ տարվա վերջում, եթե վարձակալության ավարտին մնացել է 4 տարի, այն նվազեցվում է 2 տարով: Վարձակալությունը սկզբնապես համարվել է ֆինանսական, քանի որ վարձակալության ժամկետը տնտեսական ծառայության ժամկետի 80% է:

Վարձակալության վերափոխման պահին, եթե մնացած տնտեսական ծառայությունը 8 տարի է, այն վարձակալվելու է ընդամենը 2 տարի: Եթե սա լիներ նոր վարձակալություն, ապա կդասակարգվեր որպես գործառնական: Սակայն ՖՀՍՍ16-ի պահանջով դիտարկում ենք վերափոխված պայմանները վարձակալության մեկնարկին, որի արդյունքում կստացվի 20 տարի տնտեսական ծառայություն ունեցող ակտիվի վարձակալում 14 տարով (տնտեսական ծառայության 70%-ը), որը բնորոշ է ֆինանսական վարձակալությանը: Ուստի 12-րդ տարվա վերջում վարձակալության վերափոխումը պետք է հաշվառել ըստ ՖՀՍՍ 9-ի:

## Գլուխ 11

### Վաճառք հետադարձ վարձակալությամբ

ՖՀՍՍ 16-ում հատուկ անդրադարձ է կատարվել վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքին, եթե ակտիվը վաճառվում է և գնորդը անմիջապես դա հանձնում է վաճառողին վարձակալությամբ: Գործարքի մի կողմը վաճառող-վարձակալն է, մյուս կողմը գնորդ-վարձատուն:

Ըստ Էռլյան, գործարքի առանձին բաղադրիչները՝ վաճառքը և վարձակալությունը պետք է հաշվառել որպես առանձին գործարքներ: Սակայն եթե վաճառքի գինը տարբերվում է ակտիվի իրական արժեքից, կամ վարձավճարների չափը տարբերվում է շուկայականից, ապա կատարվում է հետևյալ ճշգրտումը.

- Եթե գործարքի արժեքը շուկայականից ցածր է, տարբերությունը համարվում է վարձակալության կանխավճար;

- Եթե գործարքի արժեքը շուկայականից բարձր է, տարբերությունը համարվում է գնորդ-վարձատուի կողմից տրամադրված ֆինանսավորում (փոխառություն):

**Օրինակ 14 –** – A կազմակերպությունը 1 մլն դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոց համարվող սարքավորումը վաճառում է B կազմակերպությանը և հետ վերցնում այն վարձակալությամբ: Վարձակալությունը A-ի համար երկարաժամկետ է իսկ B-ի համար գործառնական:

Ակտիվի իրական արժեքը 1.2 մլն դրամ է, իսկ շուկայական դրույքով հաշվարկված վարձավճարների ներկա արժեքը՝ 700,000 դրամ:

ա) Վաճառքի գինը 1.3 մլն դրամ է (գերազանցում է իրական արժեքը), իսկ վարձավճարների ներկա արժեքը՝ 700,000 դրամ (հավասար է իրական արժեքին):

$1,300,000-1,200,000=100,000$  դրամը կիամարվի գնորդ-վարձատուի կողմից տրամադրված ֆինանսավորում/փոխառություն: 700,000 դրամ պարտավորության մարումից 100,000 դրամը կիամարվի փոխառության մարում, իսկ 600,000 դրամը՝ վարձակալության գծով պարտավորության մարում:

Վաճառող-վարձակալի կողմից վաճառված ակտիվի պահպանված իրավունքը կգնահատավի որպես ակտիվի արժեքի 50% [600,000/1,200,000]:

### **Կկատարվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները.**

Ա կազմակերպություն (վաճառող-վարձակալ)			
Դ-տ հաշիվ	Կ-տ հաշիվ	Գումար	Նկարագրություն
119	111	500,000	Պահպանված օգտագործման իրավունք (սարքավորման արժեք) [1,000,000*50%]
721	111	500,000	Վաճառված իրավունք (սարքավորման արժեք) [1,000,000-500,000]
252	413	600,000	Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորություն
252	412	100,000	Ստացված փոխառության գծով պարտավորություն
252	621	600,000	Վաճառված իրավունքի սարքավորման մասով հասույթ [1,300,000-600,000-100,000]

Բ կազմակերպություն (գնորդ-վարձատու)			
Դ-տ հաշիվ	Կ-տ հաշիվ	Գումար	Նկարագրություն
111	252	1,200,000	Զեղբերված սարքավորման ինքնարժեք
145	252	100,000	Տրամադրված փոխառություն

բ) Վաճառքի գինը 1.1 մլն դրամ է (իրական արժեքից պակաս), իսկ վարձավճարների ներկա արժեքը՝ 760,000 դրամ (գերազանցում է իրական արժեքը):

$760,000-700,000=60,000$  դրամը կիամարվի գնորդ-վարձատուի կողմից տրամադրված ֆինանսավորում/փոխառություն: 760,000 դրամ պարտավորության մարումից 60,000 դրամը կիամարվի փոխառության մարում, իսկ 700,000 դրամը՝ վարձակալության գծով պարտավորության մարում:

$1,200,000-1,100,000=100,000$  դրամը կիամարվի վաճառող-վարձակալի կողմից տրամադրված վարձակալության կանխավճար: Ընդհանուր վարձակալության պարտավորությունը կկազմի  $700,000+100,000=800,000$  դրամ, որից 100,000 դրամը արդեն համարվում է կանխավճարի ձևով վճարված:

Վաճառող-վարձակալի կողմից վաճառված ակտիվի պահպանված իրավունքը կգնահատավի որպես ակտիվի արժեքի 67% [800,000/1,200,000]:

## **Կկատարվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները.**

Ա կազմակերպություն (վաճառող-վարձակալ)			
Դ-տ հաշիվ	Կ-տ հաշիվ	Գումար	Նկարագրություն
119	111	670,000	Պահպանված օգտագործման իրավունք (սարքավորման արժեք) [1,000,000*67%]
721	111	330,000	Վաճառված իրավունք (սարքավորման արժեք) [1,000,000-670,000]
252	413	700,000	Երկարաժամկետ վարձակալության գծով պարտավորություն (չմարված մասը)
252	412	60,000	Ստացված փոխառության գծով պարտավորություն
252	621	340,000	Վաճառված իրավունքի՝ սարքավորման մասով հասույթ [1,100,000-700,000-60,000]

Բ կազմակերպություն (գնորդ-վարձատու)			
Դ-տ հաշիվ	Կ-տ հաշիվ	Գումար	Նկարագրություն
111	252	1,040,000	Զեղբերված սարքավորման ինքնարժեք [1,100,000-60,000]
145	252	60,000	Տրանսադրված փոխառություն
111	523	100,000	Վարձակալության գծով ստացված կանխավճար

# ԿԱՌՈՎՅԻՆ

## ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ



HR

ԿԱՄԱՐ  
ՆՈՎՆ ԳԻՆԻ



ՕՐԳԱՆԻԿ



AM-BIO-112  
Armenian Agriculture



# ՊԱՏՇՈՆՆԵՐՆ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ՎԱճԱՌԻ ՄԵՆԵԶԵՐ

## Դարգելի ընթերցող

«Գործք» ամսագրի սույն՝ 126-րդ համարում Զեք Ենք ներկայացնում վաճառքի մենեջերի պաշտոնի նկարագրությունը և աշխատանքի անվտանգության հրահանգը:

Մեր կողմից ներկայացված պաշտոնների նկարագրությունները և աշխատանքի անվտանգության հրահանգները մշակվել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ.-ի N872-Ն հրամանով հաստատված աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգչի, ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 19.09.2013թ. N873-Ն հրամանով հաստատված զբաղմունքների դասակարգչի (ՀԴ-009-2013), ISO-88-ի, պահանջներին համապատասխան:

Պաշտոնների նկարագրությունները և աշխատանքի անվտանգության հրահանգները մեր կողմից տպագրվում են «Գործք» ամսագրում,

որպեսզի օգնենք գործատուներին կիրառելու Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի (ընդունված 03.05.1996թ.-ին՝ Ստրաֆուրգում, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 01.03.2004թ.) 2-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

Պաշտոնների ներկայացման առաջնահերթությունը որոշում եք Դուք, իսկ մենք ներկայացնում ենք դրանք՝ ըստ Զեր պահանջի:

Վաճառքի մենեջերի պաշտոնի նկարագրությունը և աշխատանքի անվտանգության հրահանգը Հայաստանի Հանրապետությունում գործող աշխատողների, մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների ընդհանուր թվաքանակի՝ 10916-ի մեջ թվով 43-րդն է: Նախորդ 42 պաշտոնների նկարագրության և աշխատանքի անվտանգության հրահանգների մասին կարող եք ծանոթանալ «Գործք» ամսագրի նախորդ համարներում՝ սկսած 79-րդ համարից:



Հաստատված է  
«\_\_\_\_\_» թուղթի տնօրենի  
202\_թ.-ի «\_\_\_\_\_» թիվ \_\_\_\_ հրամանով

## ՎԱՃԱՌԻ ՄԵՆԵԶԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### I. Ընդհանուր դրույթներ

#### 1. Պաշտոնի անվանումը՝

Վաճառքի մենեջեր՝ մանրածախ խանութի (այսուհետ՝ Վաճառքի մենեջեր)

#### 2. Զբաղմունքի դասակարգչի կոդը՝ 1314

#### 3. Մասնագիտության և մասնագիտացման կոդը՝ 2200321

#### 4. Աշխատանքի բնույթը՝

Վաճառքի մենեջերի աշխատանքը պատկանում է ծառայողների խմբին:

#### 5. Աշխատանքի պայմանները՝

Վաճառքի մենեջերի աշխատանքը համարվում է նորմալ աշխատանքային պայմաններում կատարվող աշխատանք:

#### 6. Աշխատաժամանակի ռեժիմը՝

Վաճառքի մենեջերի աշխատաժամանակի ռեժիմը սահմանվում է «\_\_\_\_\_» -ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ներքին կարգապահական կանոններով:

#### 7. Հիմնական գործառույթները՝

7.1. Կառավարել իրեն հաճախարարված ոլոտի գործընթացները, պլանավորել գործողությունները և վերահսկել դրանց կատարում.

7.2. Կազմակերպել, կառավարել, իրականացնել ապրանքը սպառողներին վաճառելու աշխատանքները:

#### 8. Վաճառքի մենեջերի գիտելիքների և աշխատանքային փորձի նկատմամբ պահանջները՝

8.1. Վաճառքի մենեջեր է նշանակվում բարձրագույն մասնագիտական կրթություն (ակադեմիական առաջին աստիճան՝ բակալավր կամ ակադեմիական երկրորդ աստիճան՝ մագիստրոս) ունեցող անձը.

8.2. Վաճառքի մենեջերի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և աշխատանքային պայմանագիրը լուծում է (աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է) Կազմակերպության տնօրենը:

#### 9. Վաճառքի մենեջերը պետք է իմանա՝

9.1. Վաճառքին վերաբերվող նորմատիվ իրավական ակտերը և մեթոդական նյութերը.  
9.2. Մարքեթինգի հիմունքները, դրա սկզբունքները, խնդիրները և մեթոդները.  
9.3. Մենեջմենթի հիմունքները.

9.4. առևտրահրացման գործունեության կազմակերպման սկզբունքները, ուղղությունները, Կազմակերպության կազմակերպարագական կարգավիճակը և նրա զարգացման հեռանկարները.

9.5. շուկայի իրավիճակի, արտադրանքի պահանջարկի ուսումնասիրության մեթոդները,

9.6. գործնական շփնան եթիկան.

9.7. գնագոյացման և գնային քաղաքականությունը.

9.8. առևտրահրացման գործունեության կազմակերպումը.

9.9. գովազդի կազմակերպումը.

9.10. համակարգչային տեխնիկայի, հեռահաղորդակցման և կապի միջոցների շահագործման կանոնները.

- 9.11. սոցիոլոգիայի, հոգեբանության և աշխատանքի մոտիվացիայի հիմունքները.
- 9.12. աշխատանքի պաշտպանության կանոնները և նորմերը.
- 9.13. Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները.
- 9.14. Վաճառքի մենեջերի ժամանակավոր բացակայության ժամանակ (հիվանդություն, արձակուրդ, գործուղում և այլն) նրա պարտականությունները կատարում է սահմանված կարգով նշանակված անձը: Տվյալ անձը ձեռք է բերում համապատասխան իրավասություններ և կրում է պատասխանատվություն իր պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար:

## **10. Վաճառքի մենեջերի իրավունքները և պարտականությունները**

### **10.1. Վաճառքի մենեջերն իրավունք ունի՝**

- 10.1.1. ծանոթանալ դեկավարության կողմից ընդունված որոշումներին.
- 10.1.2. պահանջել անհիջական դեկավարից աջակցություն՝ իր պաշտոնական պարտականությունների կատարելու համար.
- 10.1.3. ներկայացնել Կազմակերպության շահերը այլ կազմակերպություններում.
- 10.1.4. դեկավարության քննարկմանը ներկայացնել սույն իրահանգով նախատեսված իր պարտականությունների կատարելագործմանն առնչվող առաջարկություններ.
- 10.1.5. կառուցվածքային ստորաբաժանումների մասնագետներին ներգրավել այն հարցերի լուծման մեջ, որոնք դրված են իր վրա.
- 10.1.6. կառուցվածքային ստորաբաժանումների դեկավարներից և մասնագետներից պահանջել տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են պաշտոնական պարտականությունների կատարման համար:

### **10.2. Վաճառքի մենեջերը պարտավոր է՝**

- 10.2.1. դեկավարել աշխատողների՝ վաճառողների, վաճառող-խորհրդատունների, գանձապահների աշխատանքը.
- 10.2.2. կազմակերպել ապրանքների ցուցադրման (վաճառավարման) աշխատանքները.
- 10.2.3. հսկել աշխատողներին, որպեսզի նրանք պահպանեն՝
  - հաճախորդների սպասարկման պատշաճ որակը և բարեհաճությունը.
  - ապրանքների վաճառքի կանոնները.
  - աշխատանքային կարգապահությունը և սանիտարահիգինիկ պահանջները.
  - աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի, հակարդեհային անվտանգության կանոնները:
- 10.2.4. կազմակերպել մեծաքանակ գնումներ կատարող գնորդների սպասարկումը.
- 10.2.5. անհրաժեշտության դեպքում հաճախորդներին օգնել ապրանքների ընտրության հարցում.
- 10.2.6. ուսումնասիրել մրցակիցների գնային քաղաքականությունը, տեսականին և նրանց աշխատանքի մեխանիզմը (գեղչերի սինեման, առաքման պայմանները, վճարման պայմանները, մատուցած ծառայությունները, երաշխիքը և գովազդը).
- 10.2.7. բացահայտել ամենաշատ պահանջարկ ունեցող ապրանքները և պատրաստել քննարկման առաջարկներ.
- 10.2.8. կազմակերպել վաճառքի համար ստացվող ապրանքների որակի, անվտանգության և պիտանիության ժամկետի ստուգումը.
- 10.2.9. կազմակերպել և իրականացնել վաճառքից հանելու ենթակա անրակ, պիտանիության ժամկետը անցած և անշտկելի թերություններ ունեցող ապրանքները,
- 10.2.10. հսկողություն իրականացնել ապրանքների գնապիտակների առկայության նկատմամբ.
- 10.2.11. միջոցներ ձեռնարկել աշխատողների և հաճախորդների միջև առաջացած տարածայնությունները հարթեցնելու ուղղությամբ.
- 10.2.12. իրականացնել սարքավորումների սարքինության նկատմամբ հսկողությունը և անհ-

րաժեշտության դեպքում Կազմակերպության տնօրենությանը տեղեկացնել սարքավորումների անսարքությունը վերացնելու միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին.

10.2.13. Կազմակերպել վերադարձի, դուրսգրման, վերագնահատման և պահեստավորման գործողությունները, կազմել ապրանքային շարժի հաշվետվություններ.

10.2.15. բացահայտել արտադրանքի բոլոր պոտենցիալ օգտագործողներին, նրանց հետ հաստատել կապեր և առաջարկել Կազմակերպության ապրանքները և ծառայությունները, ստեղծել կազմակերպությունների համապատասխան բազա, ինչպես նաև կատարել բանակցությունների մաճրամասն նշումներ.

10.2.16. սերտ կապեր հաստատել ակտիվ հաճախորդների հետ և ստեղծել բարենպաստ պայմաններ պասիվ հաճախորդների հետ աշխատելու համար.

10.2.17. Վերլուծողներին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն տվյալների շտեմարան ստեղծելու համար, հետևել տվյալների կատարելագործմանը և բարմացմանը,

10.2.18. համաձայնեցնել աշխատանքի պայմանները հաճախորդների հետ, մասնակցել արտադրանքի վաճառքի, առաքման պայմանագրերի նախապատրաստման և կմքման աշխատանքներին.

10.2.19. կազմակերպել Կազմակերպության արտադրանքի իրացման և առաքման աշխատանքները.

10.2.20. կազմակերպել պատվիրած ապրանքի ժամանակին բարձումը հաճախորդին, հսկել բարձնան ծավալը, չիրացված արտադրանքի մնացորդը, փաստաթղթերի ժամանակին կազմումը.

10.2.21. ապահովել իրացված ապրանքից առաջացած միջոցների ժամանակին ներմուծման աշխատանքները, հսկել վճարման գրաֆիկի կատարմանը և աշխատանքի արդյունքները մասին տեղեկացնել տնօրենությանը, հետևել պահեստում եղած մնացորդին.

10.2.22. մշակել և ապահովել միջոցառումների իրականացման և իրացման ցանցի ստեղծման աշխատանքները.

10.2.23. պատրաստել առաջարկություններ արտադրանքի տեսականու փոփոխությունների, ծառայությունների և գեղային քաղաքականության նասով, որը հիմնավորվում է շուկայի պահանջարկների հստակ ուսումնասիրության արդյունքում.

10.2.24. մասնակցել ցուցահանդեսների, տոնավաճառների, ցուցահանդես-վաճառքների և այլ միջոցառումների Ընկերության ապրանքները և ծառայությունները ներկայացնելու և նոր հաճախորդներ ներգրավելու նպատակով.

10.2.25. համագործակցել Ընկերության տարբեր ստորաբաժանումների հետ (գովազդ, վերլուծություն, մատակարարում) խնդիրների միասնական լուծման համար.

10.2.26. զբաղվել աշխատանքային խնդերի արդյունավետության բարձրացման հարցերով.

10.2.27. պահապնել ներքին կարգապահական կանոնները.

10.2.28. մասնակցել գույքագրման աշխատանքներին:

## 11. Վաճառքի մենեջերի պատասխանատվությունը

### Վաճառքի մենեջերը պատասխանատվություն է կրում՝

11.1. սույն աշխատանքի նկարագրությամբ սահմանված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար,

11.2. իր գործունեության ընթացքում կատարած օրենսդրական խախտումների համար,

11.3. կազմակերպությանը պատճառած վճարի համար,

11.4. իրեն ամրագրված գույքի պահպանման համար:

### Նամիջական դեկազրի հետ՝

/ստորագրությունը / /անվանատառ, ազգանունը/

«\_\_\_\_» «\_\_\_\_\_» 202\_թ.

### Աշխատանքի նկարագրությանը

ծանոթացա՝

/ստորագրությունը / /անվանատառ, ազգանունը/

«\_\_\_\_» «\_\_\_\_\_» 202\_թ.



Հաստատված է  
«\_\_\_\_\_» ՍՊԸ-ի տնօրենի  
202\_թ.-ի «\_\_» «\_\_\_\_»-ի թիվ \_\_\_\_ հրամանով

## ՎԱճԱՌԻ ՄԵԼԵԶԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՅԱՆԳԸ

### I. Աշխատանքի անվտանգության ընդհանուր պահանջները

1.1. Վաճառքի մենեջերի աշխատանքին թույլատրվում են անցնել աշխատանքի անվտանգության ուսուցում անցած կանայք կամ տղամարդիկ:

1.2. Վաճառքի մենեջերն աշխատատեղում անցնում է աշխատանքի անվտանգության առաջնային հրահանգավորում, վերապատրաստում, օգտագործվող փաթեթավորման սարքի կառուցվածքի և շահագործման կանոնների ուսուցում, էլեկտրական անվտանգության գիտելիքների ստուգում, աշխատանքի անվտանգ միջոցների տեսական գիտելիքների և հնտությունների ուսուցում:

#### 1.3. Աշխատանքի ընթացքում աշխատողը անցնում է՝

- ✓ տարվա մեջ առնվազն մեկ անգամ՝ աշխատանքի անվտանգության պահանջների գիտելիքների ստուգում,
- ✓ տարվա մեջ առնվազն մեկ անգամ՝ ոչ էլեկտրատեխնիկական անձնակազմի համար նախատեսված էլեկտրական անվտանգության գիտելիքների ստուգում.
- ✓ հաստատված ծրագրերով վեց ամսում առնվազն մեկ անգամ՝ աշխատատեղում կրկնվող հրահանգավորում:

1.4. Վաճառքի մենեջերի վրա կարող են ազդել վտանգավոր և վնասակար արտադրական գործոնները (մեխանիկական սարքերի շարժական մասերը, տեղափոխվող ապրանքները և տարաները, ապրանքների, սառեցման սարքավորումների սառը մակերեսները, օդի բարձր շարժունությունը, էլեկտրական շղթայի լարվածության բարձր նշանակությունը, աշխատանքային տարածքի անբավարար լուսավորվածությունը, գործիքի, սարքավորումների, գույքի, ապրանքների սուր ծայրերը, ծեպները և անհարթությունները, ֆիզիկական գերլարումները):

1.5. Կազմակերպությունում հաստատված նորմերին համապատասխան՝ աշխատողը պետք է ապահովի անձնական պաշտպանության միջոցներով:

1.6. Վաճառքի մենեջերն աշխատանքը սկսելուց առաջ, աշխատանքի յուրաքանչյուր ընդմիջումից և աղտոտված առարկաներին դիմումը, ինչպես նաև սանհանգույց այցելելուց հետո պետք է մանրակրկիտ կերպով օճառով լվանա ծեռքերը:

1.7. Այն անձինք, որոնք չեն իրականացրել աշխատանքի անվտանգության հրահանգի պահանջները կամ խախտել են դրանք, ենթակա են կարգապահական պատասխանատվության օրենսդրությամբ սահմանված կարգով:

### II. Աշխատանքի անվտանգության պահանջները աշխատանքները սկսելուց առաջ

2.1. Հագնել արտահագուստը, կոճկել բոլոր կոճակները, թույլ չտալ կախված մասերի առկայությունը: Ստուգել գրապաններում սուր ծակող, կտրող առարկաների առկայությունը, դրանց առկայության դեպքում հանել դրանք գրապաններից և տեղափորել դրանք անվտանգ, փակվող դարակում:

2.2. Պատրաստել աշխատատեղն անվտանգ աշխատանքի համար, ստուգել աշխատատեղում սարքավորումների, գործիքի և հարմարանքների առկայությունը:

2.3. Արտաքին գննմամբ ստուգել գույքի, գործիքի և հարմարանքների սարքինությունը:

### III. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքի ընթացքում

3.1. Թույլատրվում է իրականացնել միայն այն աշխատանքը, որի վերաբերյալ աշխատողն անցել է ուսուցում, աշխատանքի անվտանգության հրահանգավորում և որին վաճառքի մենեջերին թույլատրվել է անցնել:

3.2. Իր աշխատանքը, աշխատանքային պարտականությունները, գործառույթները չհանձնարարել ուսուցում չանցած և կողմնակի անձանց:

3.3. Կիրառել անվտանգ աշխատանքի համար անհրաժեշտ սարքին գույք, գործիք, հարմարանքներ, դրանք օգտագործել միայն այն աշխատանքների համար, որոնց համար դրանք նախատեսված են:

3.4. Քետևել կազմակերպության տարածքով մեկ նախատեսված տեղաշարժման կանոններին, օգտվել միայն սահմանված անցումներից:

3.5. Աշխատատեղում պահպանել մաքրություն, աշխատանքային մակերեսներից ժամանակին վերացնել մթերքները, ճարպերը, ջուրը և այլն:

3.6. Գույքով, տարաներով, ապրանքների ավելցուկով չթափացնել աշխատատեղը, դրան տանող ուղիները, սարքավորումների միջև գոյություն ունեցող անցումները, տարահանման և այլ ուղիները:

#### 3.7. Դանակով աշխատելիս՝

- ✓ գգույշ լինել, ծեռքերը պաշտպանել կտրվածքներից,
- ✓ աշխատանքի ընդհանուրների ժամանակ դանակը դնել դրա համար նախատեսված պատյանի մեջ, դանակը ծեռքում չշրջել, չկռանալ, դանակը չտեղափոխել՝ առանց դրա համար նախատեսված պատյանի մեջ դնելու:

3.8. Փաթեթավորված տուփերը բացելիս օգտվել այնպիսի լարանից, որի հաստությունը բացառում է ծեռքերը կտրելը:

3.9. Սայլակները, շարժական դարակաշարերը, բեռնարկերը տեղաշարժել «ինքդ քեզնից» ուղղությամբ:

#### 3.10. Ապրանքները տեղափոխել միայն սարքին տպայով:

3.11. Նստելու համար չօգտագործել պատահական առարկաներ (տուփեր, տակառներ և այլն), սարքավորումներ:

#### 3.12. Սառնարանային սարքավորումները շահագործելիս՝

- ✓ սառեցվող ապրանքները սարքավորման մեջ տեղադրել միայն սառնարային սարքը միացնելուց և մթերքները պահպանելու համար անհրաժեշտ ջերմաստիճանի հասնելուց հետո.
- ✓ ապրանքների քանակությունը չպետք է գերազանցի նախատեսված է տարողունակության քանակը.
- ✓ սառնարանային սարքավորուման դոները բացել կարճ ժամանակով, որքան հնարավոր է հազվադեպ.
- ✓ արտահոսք նկատելու դեպքում անմիջապես անջատել սարքավորումը և օդափոխել շինությունը:

#### 3.13. Սառնարանային սարքավորումը շահագործելիս արգելվում է՝

✓ միացնել ագրեգատը՝ պաշտպանիչ հողանցման կամ էլեկտրական շարժիչների գրոյացման պարագայում.

- ✓ աշխատել ավտոմատացման անսարք սարքերով.
- ✓ թափթափած վիճակում պահել սարքի շրջակա տարածքը.
- ✓ դիաչել ցանցին միացրած ագրեգատի սարքին՝ անկախ նրանից այն աշխատում է, թե գտնվում է ավտոմատ դադարի ռեժիմում.

✓ սարքի պարսպումների մակերեսին տեղադրել կողմնակի առարկաներ:

#### 3.14. Էլեկտրական սարքավորումներ կիրառելիս՝

✓ հետևել արտադրողի՝ շահագործման փաստաթղթերում շարադրված աշխատանքի անվտանգության պահանջներին.



✓ սարքավորումները միացնել և անջատել չոր ձեռքերով և միայն «միացում» և «անջատում» կոճակներով.

✓ կորպուսին լարվածության առկայության, կողմնակի աղմուկի, կրակի, ծխի հոտի առաջացման, սարքավորման մեխանիզմների և տարրերի ինքնական դադարի կամ սխալ աշխատանքի դեպքում դադարեցնել դրա աշխատանքը՝ «անջատում» կոճակի միջոցով և այն անջատել էլեկտրական ցանցից: Այդ մասին հայտնել անմիջական դեկավարին և միացնել/շահագործել այն միայն անսարքությունները վերացնելուց հետո.

- ✓ տեղափոխել (տեղաշարժել) էլեկտրական ցանցին միացրած ստացիոնար սարքավորումները,
- ✓ սարքավորման վրա դնել, գործիքը, արտադրանքը, փաթեթավորման նյութերը, սպասքը:

## IV. Աշխատանքի անվտանգության պահանջներն վթարային իրավիճակներում

4.1. Կրակի, հրդեհի առաջացման դեպքում անմիջապես դադարեցնել աշխատանքը, անջատել էլեկտրական սարքավորումները, կանչել հրդեհային անվտանգությանը, հայտնել անմիջական դեկավարին և կազմակերպության վարչարարական բաժնին, շինությունից տարահաման գործողություններ ձեռնարկել: Հրդեհաշխման համար անհրաժեշտ է կիրառել հրդեհաշխման առաջնային միջոցներ, մասնակցություն ունենալ մարդկանց տարահամանը: Էլեկտրական սարքավորումների այրման դեպքում կիրառել միայն ածխաթթվային կամ փոշային կրակմարիչներ:

4.2. Վնասվածք ստանալու դեպքում վաճառքի մենեջերը պարտավոր է դադարեցնել աշխատանքը, տեղեկացնել անմիջական դեկավարին, շտապ օգնություն կանչել կամ դիմել բժշկական հաստատություն:

4.3. Էլեկտրական հարված ստանալու դեպքում անհրաժեշտ է տուժողին ազատել հոսանքի ազդեցությունից՝ էլեկտրական սարքավորումը անջատողով կամ անջատիչով անմիջապես անջատելով: Եթե հնարավոր չէ բավական արագ անջատել էլեկտրական սարքավորումը, ապա անհրաժեշտ է տուժողին ազատել դիմել էլեկտրիկ ձեռնոցների միջոցով, դրա հետ մեկտեղ պետք է հետևել, որ ինքը էլ չհայտնվես լարվածության տակ: Տուժողին հոսանքի ազդեցությունից ազատելուց հետո անհրաժեշտ է գնահատել նրա վիճակը, շտապ օգնություն կանչել և մինչև բժշկի ժամանելը առաջին օգնություն ցուցաբերել:

## V. Աշխատանքի անվտանգության պահանջներն աշխատանքներն ավարտելուց հետո

5.1. Աշխատանքը ավարտելուց հետո վաճառքի մենեջերը պարտավոր է՝

- ✓ անջատել էլեկտրական սարքավորումները,
- ✓ աշխատանքային սարքավորումները, պարագաները տեղադրել նախատեսված տեղում:

5.2. Կարգի բերել աշխատատեղը, աշխատանքային գործիքները, գույքը, այդ նպատակով կիրառել հասուլ ձեռնոցներ և հարմարանքներ:

5.3. Աղբը, թափոնները և կիրառված մաքրման նյութերը տեղադրել հասուլ նախատեսված տեղերում:

5.4. Աշխատանքի ընթացքում նկատված բոլոր թերությունների մասին հայտնել անմիջական դեկավարին:

### Հրահանգին ծանոթացած



## «2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՅ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԻԻ ՓՈՒԾ

«2020թ. ՀՅ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի 11-րդ շրջանի երրորդ փուլին ներկայացվում է իննուրի հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ «Դաշտավայրում և բացահայտումներ», «Գրագիտություն և իրազեկվածություն», ինչպես նաև հոգեմտածողության և իրավակիրառական պրակտիկային վերաբերող թեմաներից:

**Դարցաշարի** հարցերի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Դարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

**Խնդրի** ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր՝ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Խնդրի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

**«Բացահայտում»** առաջադրանքը բաղկացած է 5 հարցից, իսկ պատասխանները՝ 5-ից ավելին են: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

**«Գրագիտություն և իրազեկվածություն»** մասում առաջարկվում է մշակել 14-16 տարեկան աշխատող ընդունելու դեպքում ծնողի, որդեգրողի, հոգաբարձու կամ խնամակալի հետ կնքվող (ստորագրվող) գրավոր համաձայնագրի տեքստը: Պատասխանը կգնահատվի 0-10 միավոր:

**«Հոգեմտածողություն»** խորագրի ներքո առաջարկվում է բանակցային եթիկայից մի փոքր դրվագ, որն անհրաժեշտ է պահպանել ամենատարբեր մակարդակի բանակցությունների ժամանակ: Դարցերի թիվը 10-ն է: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան կգնահատվի 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Երրորդ փուլին ներկայացված առաջադրանքների ընդհանուր միավորների առավելագույն թիվը գերազանցում է 45 միավորը:

Երրորդ փուլին ներկայացված առաջադրանքներից, ինչպես նաև I և II փուլերի հաշվով առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երրորդ փուլին ներկայացված առաջադրանքների պատասխաններն ուղարկել [press@gortsq.am](mailto:press@gortsq.am) էլեկտրոնային հասցեին մինչև 2020թ. օգոստոսի 30-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն [www.gortsq.am](http://www.gortsq.am) կայքեցում 2020թ. օգոստոսի 31-ին:

**ՈՒԾԱԴՐՈՒԹՅՈՒՆ** – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանշով ուկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:



## «2020թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

### ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Երևան քաղաքում գործունեություն ծավալող 10 և ավելի աշխատող ունեցող գործատուն աշխատավարձի վճարումները կատարում է անկանխիկ եղանակով:

Եթե Երևան քաղաքում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ գործատու համարվող անհատ ծեռնարկատիրոջ մոտ աշխատողների թիվը՝ անհատ ծեռնարկատերի հետ միասին, կազմում է 10 մարդ, ապա աշխատողների աշխատավարձը պետք է վճարել կանխիկ, թե՝ անկանխիկ եղանակով՝

- ա) աշխատավարձը պետք է վճարել կանխիկ եղանակով.
- բ) աշխատավարձը պետք է վճարել անկանխիկ եղանակով.
- գ) ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատավարձի վճարման կանոնը չի վերաբերում ֆիզիկական անձ գործատու համարվող անհատ ծեռնարկատերին:

2. Աշխատողը կարո՞ղ է գրավոր դիմել գործատուին՝ պարգևատրություն ստանալու համար: (Պատասխանի տարբերակները բացակայում են: Տվեք Ձեր պատասխանը և մեկնաբանեք այն):

3. Գործատուն կարո՞ղ է տրամադրել դրամական օգնություն՝ առանց աշխատողի գրավոր դիմումի:

(Պատասխանի տարբերակները բացակայում են: Տվեք Ձեր պատասխանը և մեկնաբանեք այն):

4. Հնարավո՞ր է նվազագույն ժամային դրույթաչափով աշխատողի ամսական աշխատավարձի չափը ցածր լինի նվազագույն ամսական աշխատավարձից:

(Պատասխանի տարբերակները բացակայում են: Տվեք Ձեր պատասխանը և մեկնաբանեք այն):

5. Եթե աշխատողը աշխատանքային օրվա ընթացքում մեկից ավելի անգամ խախտել է կարգապահական կանոնները, ապա ՀՀ աշխատանքային օրենսգրքով չի արգելվում աշխատողին տարբեր կարգապահական կանոնների խախտման համար կիրառել կարգապահական տույժեր:

Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար տնօրենը աշխատողի նկատմամբ կիրառել է «Նկատողություն» կարգապահական տույժը և «Խիստ նկատողություն»՝ առաջին խախտման վերաբերյալ բացատրություն չներկայացնելու համար՝

- ա) գործատուն այդպես վարվելու իրավունք ունի.
- բ) գործատուն այդպես վարվելու իրավունք չունի.
- գ) գործատուն այդպես վարվելու իրավունք ունի, եթե այն սահմանված է կազմակերպության ներքին կարգապահական կանոններում:

## «2020թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԻԻ ՓՈՒԼԻ

### ԽՆԴԻՐԸ

Անձն ընդունվել է աշխատանքի 3 ամիս ժամկետով: Աշխատանքային գործունեության 2 ամիսը լրանալուն պես գործատուն ցանկանում է կրճատել տվյալ աշխատատեղը և ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետում ժանուցում է աշխատակցին՝ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մտադրության մասին (հայտնի է, նման դեպքերում գործուն է ծանուցման երկանյա ժամկետ): Սակայն պայմանագրի գործողության ժամկետի վերջին օրը աշխատողին ազատում է աշխատանքից՝ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու հիմքով:

Աշխատողը, հաշվի առնելով այն հանգանանքը, որ գործատուն իրեն ծանուցել է, որ աշխատանքից պետք է ազատվի հաստիքների կրճատման պատճառով, պահանջում է ոչ թե իրեն ազատեն աշխատանքից պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու հիմքով, այլ՝ հաստիքների կրճատման, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված հիմքով և վերջնահաշվարկի մեջ ներառել արձակման նպաստը, և քանի որ գործատուն իրեն աշխատանքից ազատել է ծանուցման ժամկետից մեկ ամիս շուտ, նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուժանքը՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ հիմք ընդունելով աշխատողի միջին օրական աշխատավարձի չափը:

Գործատուն մերժում է աշխատողի պահանջը՝ պատճառաբանելով, որ, ճիշտ է, աշխատողին ծանուցմանը տեղեկացրել է հաստիքների կրճատման պատճառով աշխատանքից ազատման մասին, սակայն այդ ընթացքում լրացել է աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը, հետևաբար նրան ազատել է աշխատանքից աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու հիմքով:

Աշխատողը դիմել է դատարան՝ չստացած գումարները ստանալու հայցով:

Դուք եք դատավորը: Ի՞նչ վճիռ կկայացնեք:

## «2020թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻԻ ՓՈՒԼ «ԲԱՑԱՐԱՅՑՑՈՒՄՆԵՐ»

### Թվարկել ՀՀ իրավական այն ակտերը, որով սահմանվում են՝

- աշխատանքի վճարակար պայմաններում աշխատողի պարտադիր պարբերական բժշկական զննությունը.
- աշխատողների պարտադիր պարբերական բժշկական զննությանը՝ ի շահ իրեն և ի շահ հանրային լայն շրջանակների.
- աշխատողների զբաղեցրած պաշտոնի, կատարած աշխատանքի, մասնագիտության անվանումները.
- աշխատանքային գործունեության այն տեսակները, որոնք համարվում են առողջության համար վտանգավոր աշխատանքներ.
- այն հանգանանքները, որոն թույլ են տալիս աշխատողներին անցնելու ժամկետից շուտ կենսաթոշակի:

## «2020թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

### ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻԻ ՓՈՒԼ «ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք:

Հանձնարարություն եք ստացել աշխատանքի ընդունել 15 տարեկան պատանուն: Օգնեք մարդկային ռեսուրսների կառավարչին՝ կազմելու գրավոր համաձայնագրի տեքստը:

## «2020թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

### ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԻԻ ՓՈՒԼԻ ՀՈԳԵՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Սեղանի շուրջ կանգնած են բանակցող կողմերը: Ե՞րբ պետք է նստեն իրենց հատկացված տեղերում (ո՞վ պետք է նստի առաջինը, կամ՝ թե նստում են միաժամանակ, կամ՝ ...), եթե բանակցության կողմերն են՝

- Հրավիրող պետության նախագահը, թե՝ հյուրընկալվող պետության նախագահը –
- ՀՀ Վարչապետը, թե՝ օտարերկրյա պետության դեսպանը –
- ՀՀ Վարչապետը, թե՝ համաշխարհային բանկի ներկայացուցիչը –
- ՀՀ Վարչապետը, թե՝ ՀՀ մարզպետը (հանդիպում խորհրդակցության նպատակով) –
- Հրավիրող Ա գործատուն, թե՝ հրավիրված Բ գործատուն –
- Գործատուն, թե՝ արհմիութենական կազմակերպության նախագահը –
- Հրավիրող ստորաբաժանման ղեկավարը, թե՝ նույն կազմակերպությունում գործող այլ ստորաբաժանման ղեկավարը –
- Ռայոնի տնօրենը, թե՝ ծնողը –
- Եթե կողմերը պաշտոնական դիրքի կարգավիճակով իրավահավասար են –
- Եթե կողմերը պաշտոնական դիրքի կարգավիճակով իրավահավասար չեն –



## «2020թ. ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱԿԱՐԻԶ»

ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ  
ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Լուսին Նովայսյան  
Վրարատի քաղաքավետարան  
Ֆինանսատնտեսական և գանձումների  
բաժնի գլխավոր նախագետ  
(46/19) միավոր



Նաիրա Վարդանյան  
Մարդկային ռեսուրսների  
կառավարման մասնագետ  
(45/19) միավոր




Խաչատրյալ Ավետիսյան  
Գեղարդումիքի մարզի Սպորտիսամի  
համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(43.6/17) միավոր



Վրտակ Ստեփանյան  
ՀՀ Գեղարդումիքի մարզի ճամբարակի  
համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(43.1/13.5) միավոր



Լիլի Հարությունյան  
Գեղարդումիքի մարզի  
Լճաշենի համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(42/19) միավոր



Սյուզաննա Գևորգյան  
Երևանի քաղաքավետարանի  
«Քրային կառույցներ» ՓԲԸ  
կայդերի տեսուչ  
(41/15) միավոր



Որբերտ Ղանիեյյան  
Հրազդանի համայնքապետարան  
աշխատակազմի քարտուղար  
(39/13) միավոր



Մարգարիտա Մինասյան  
HR, կադրային հաշվառքի  
(37/17) միավոր



Զարուհի Ղազարյան  
Վրարատի մարզի Վարդաշենի  
համայնքապետարան  
Հաշվառքի, գնումների համակարգոր,  
(36/12) միավոր



Սամվել Էգնատոսյան  
ՀՀ Շիրակի մարզի Անասիայի  
համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(35/16) միավոր



Րամմիկ Զաքարյան  
ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի  
համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(32.6/10) միավոր



Ծոյիկ Ղազարյան  
ՀՀ Կոտայքի մարզի  
Մրգաշենի համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(31/6) միավոր




Մարգարիտա Զատիհնյան  
ՀՀ Լոռու մարզ  
Դսեղի համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(25/10) միավոր



Գագիկ Ղակորյան  
ՀՀ Շիրակի Փոքր Մանթաշի  
համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(25.7/7) միավոր



Արմեն Առաքելյան  
Կոտայքի մարզի Քանաքեռավաճի  
համայնքապետարան  
Աշխատակազմի քարտուղար  
(24/4) միավոր



Մարինե Ղազարյան  
«Կապանի թիվ 3 հատուկ  
կրթահանալիր» ՊոլԱԿ  
տնօրին  
(17) միավոր



## «2020 թՎԱԿԱՆԻ ՀՅ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՐ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐՔԵՐԱՇԽԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼ

«2020թ. ՀՅ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված նրգույթի 11-րդ պարբերացության 3-րդ ընտրական փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդիրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր:

Երրորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդիրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել [press@gortsq.am](mailto:press@gortsq.am) էլեկտրոնային հասցեին մինչև 2020թ. օգոստոսի 30-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն [www.gortsq.am](http://www.gortsq.am) կայքին 2020թ. օգոստոսի 31-ին:

**ՈՒԵԱՂՐՈՒԹՅՈՒՆ** – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանշական ուսկեղող շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2021 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

## «2020 թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՐ»

### ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐՄԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ

### III ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

**Յարց 1. Նշվածներից ո՞ր հատկանիշը չի բավարարում հաշվեգրման սկզբունքին՝**

- ա) հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահից.
- բ) հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից.
- գ) հարկ վճարողը հարկերի, բնօգտագործման վճարի և հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հարկային պարտավորության ծագման կամ հարկերից հաշվանցվող (պակասեցվող) գումարների առաջացման պահից.
- դ) հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից:

**Յարց 2. Նշվածներից ո՞րը չի համարվում շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու հայտանիշ՝**

- ա) ընթացիկ հարկային տարում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը.
- բ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ հիմնադիրը գրանցել է ԱԶ, որը գործել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գուգահեռ.
- գ) նույն հարկային տարվա ընթացքում արձանագրվել է ՀԴԸ-ի կրաօնման կանոնների խախտման 3 դեպք.
- դ) հարկային տարվա ընթացքում ՍՊԸ-ից վերակազմավորվել է ՓԲԸ-ի:

**Յարց 3. Ո՞ր կազմակերպություններն են պարտավոր հաշվապահական հաշվառումը վարել լիազոր մարմնի սահմանած չափանիշները բավարարող համակարգչային ծրագրով՝**

- ա) բոլոր կազմակերպությունները.
- բ) հանրային հատվածի կազմակերպությունները.
- գ) հանրային հատվածի այն կազմակերպությունները, որոնց բյուջետային ֆինանսավորումը նախորդ տարի գերազանցել է 400 մլն դրամը.
- դ) նման սահմանափակում սահմանված չեն:

**Յարց 4. Նշվածներից որի՝ գծով կազմակերպությունում չի առաջանա հետաձգված հարկային պարտավորություն՝**

- ա) ընթացիկ ժամանակաշրջանում ոչ նյութական ակտիվի արժեքը շահութահարկի հաշվարկման նպատակներով ամբողջապես նվազեցվել է, սակայն հաշվապահական նպատակներով որպես ծախս է ճանաչվել դրա արժեքի 10 տոկոսը, իսկ մնացած մասը կճանաչվի որպես ծախս հետագա տարիների ընթացքում.
- բ) ընթացիկ ժամանակաշրջանում կատարված վերաչափման արդյունքում վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի արժեքը աճել է, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով պահպող ֆինանսական ակտիվի արժեքը աճել է, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով այդ վերաչափման արդյունքները հաշվի չեն առնվուն.
- գ) ընթացիկ ժամանակաշրջանում կատարված վերաչափման արդյունքում առևտրական նպատակներով պահպող ֆինանսական ակտիվի արժեքը աճել է, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակներով այդ վերաչափման արդյունքները հաշվի չեն առնվուն.

դ) ընթացիկ ժամանակաշրջանում հիմնական միջոցների վերագնահատման արդյունքում դրանց հաշվեկշռային արժեքը աճել է, և այդ վերագնահատման արդյունքները շահութահարկի հաշվարկման նպատակներով հաշվի են առնվում:

**Հարց 5. Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման զուտ արժեք դուրս գրումը ճանաչվում է որպես՝**

- ա) տվյալ ժամանակաշրջանի ծախս.
- բ) պաշարների իրացումից հասույթի ծցրտում.
- գ) հետաձգված ծախս՝ ճանաչվելով որպես ծախս այդ պաշարների իրացման ժամանակաշրջանում.
- դ) գումարվում է պաշարների ինքնարժեքին:

**Հարց 6. Նշվածներից ո՞ր գործունեությունն է համարվում գործառնական գործունեություն՝**

- ա) արտադրանքի (ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) արտադրությունը և վաճառքը.
- բ) կազմակերպության սովորական գործունեությունը.
- գ) կազմակերպությանը եկամուտ բերող հիմնական գործունեությունը, ինչպես նաև այլ գործունեությունը, բացառությամբ ֆինանսական և ներդրումային գործունեությունների.
- դ) կազմակերպությանը եկամուտ բերող հիմնական գործունեությունը:

**Հարց 7. Ֆինանսական վարձակալության գծով վճարման ենթակա վարձավճարները վարձակալի հաշվեկշռում ճանաչվում են որպես՝**

- ա) հետաձգված ծախս՝ հետագայում ամբողջությամբ հաշվեգրվելով ծախսներին.
- բ) հետաձգված եկամուտ՝ հետագայում ամբողջությամբ հաշվեգրվելով եկամուտներին.
- գ) դրանց ճանաչումը հետաձգվում է մինչև վճարման պահը.
- դ) նշված բոլոր պատասխաններն ել սխալ են:

**Հարց 8. Վաճառված ոչ նյութական ակտիվի գծով կուտակված արժեզրկման դուրսգրման արտացոլում՝**

- ա) Դեբետ 721  
Կրեդիտ 131.
- բ) Դեբետ 136  
Կրեդիտ 131.
- գ) Դեբետ 714  
Կրեդիտ 136:

**Հարց 9. Գործուղման համար աշխատակցին տրված կանխավճարի արտացոլում՝**

- ա) Դեբետ 713  
Կրեդիտ 251.
- բ) Դեբետ 228  
Կրեդիտ 251.
- գ) Դեբետ 527  
Կրեդիտ 251:

## Հարց 10. Մասնակցի կողմից նյութերով կանոնադրական կապիտալ ներդրման արտացոլում՝

ա) Դեբետ 211

Կրեդիտ 312.

բ Դեբետ 211

Կրեդիտ 529.

գ) Դեբետ 211

Կրեդիտ 351:

## «2020 թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՅ» ՄՐՑՈՒՅԹԻ 11-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒՆ ԽՆԴԻՐԸ

«ԱԼՖԱ» ՍՊԸ-ն ստեղծվել է 2019թ.-ին և զբաղվել է կահույքի արտադրությամբ: Ստեղծման օրվանից համարվել է ԱԱՀ վճարող: 2020թ.-ի փետրվար ամսվա ընթացքում կատարել է հետևյալ գործարքները՝

1. մանրածախ եղանակով իրացրել է 54 000 հազ. ՀՀ դրամ արժողությամբ կահույք և 6 000 հազ. դրամ արժողությամբ հումք: Կատարել է ՈԴ արտահանում՝ 200 000 ռուբ. արժողությամբ կահույք 02.02.2020թ.-ին: Մանրածախ իրացման 10 տոկոսը իրացվել է սովորական կիրառվող գներից 30 տոկոս ցածր գնով: 12.02.2020թ.-ին Վրաստանի ռեզիդենտ ընկերությունից ստացել է խորհրդատվական ծառայություն, որի մասով նատակարարի անունից հաշիվ է գրվել 25.03.2020թ.-ին.

2. 22.02.2020թ.-ին իրացրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույք՝ 80 000 հազ. ՀՀ դրամով, որի կադաստրային արժեքը կազմել է 78 000 հազ. ՀՀ դրամ, իրական արժեքը՝ 120 000 հազ. ՀՀ դրամ: Սակայն, ինչպես հետագայում պարզվել է, գույքի սեփականության իրավունքը գրանցվել է 01.03.2020թ.-ին: Միևնույն ժամանակ պարզվել է, որ 08.01.2020թ.-ին 8000 հազ. ՀՀ դրամով իրացված ավտոմեքենայի պետական գրանցումը կատարվել է 02.02.2020թ.-ին, որի շուկայական արժեքը եղել է 12 000 հազ. ՀՀ դրամ.

3. ՈԴ արտահանված կահույքը ներմուծված է եղել Զինաստանից 01.02.2020թ.-ին, որի ներմուծման պետական գրանցումը կատարվել է 01.02.2020թ.-ին 800 հազ. մաքսային արժեքով, կատարվող գործարքը ազատված է եղել ԱԱՀ-ից: Փետրվար ամսում կատարված 15.02.2020թ.-ի 2 000 000 ռուբլի արժողությամբ ապրանքները մատակարարվել են անմիջապես Զինաստանից.

4. Նույն հաշվետու ժամանակաշրջանում հարկային հաշիվներով ստացել է 60 000 հազ. ՀՀ դրամ հումք և ՀԴՄ կտրոններով 2 400 հազ. ՀՀ դրամ արժողությամբ հումք: Զարկային հաշիվները սահմանված կարգով ստացողի կողմից ստորագրվել են մինչև 20.03.2020թ.-ը և ՀԴՄ կտրոնների վրա նշված է եղել գնորդի ՀՎՀՀ-ն:

**Որոշել 2020թ.-ի փետրվար ամսվա վճարման /հաշվանցման/ ենթակա ԱԱՀ գումարի չափը:**



## «2020թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅԻ ՀԱՆՎԱՊԱՅ»

### ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ

#### ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ




**Աննա Սաքեյյան**  
Երևանի պողպատյան  
խողովաների գործարան  
«Մեսոպ Սուհը» ՓԲԸ  
գլխավոր հաշվապահի  
տեղակալ  
(44/29) միավոր



**Արմա Բաղդրասարյան**  
ՀՀ Արագածոտնի  
մարզ՝ Կարբիի  
համայնքապետարան  
հաշվապահ  
(39/29) միավոր



**Լիլիտ Սարգսյան**  
ՀՊԴՀԿՄ  
պետական գնումների  
մասնագետ-հաշվապահ  
(39/26) միավոր



**Հայկ Թօվմանյան**  
«Յուփեյ» ՓԲԸ  
գլխավոր հաշվապահ  
(37/25) միավոր



**Նարինե Զականովա**  
Ոսկեվազի  
համայնքապետարան  
Առաջատար մասնագետ  
(36/24) միավոր



**Արմինե Խասիկյան**  
ՀՀ Շիրակի մարզի Անձնայի  
համայնքապետարան  
Աշխատակազմի  
գլխավոր  
մասնագետ-հաշվապահ  
(34/22) միավոր



**Արման Ամրոյան**  
«Շայ-ռուսական  
համալսարան» ՊՈԱԿ  
գլխավոր հաշվապահ  
(34/21) միավոր



**Քակոր Մարտիրոսյան**  
ՀՀ Գեղարքունիքի  
մարզի ճամբարակի  
համայնքապետարանի  
աշխատակազմի  
ֆինանսատեսական բաժնի  
պետ  
(30/16) միավոր



**Նարիք Մարտիրոսյան**  
«ԷՅ ԱՅ Թի Սի» ՍՊԸ  
հաշվապահ  
(28/14) միավոր



**Սոնա Մարտիրոսյան**  
ՀՀ Արմավիրի մարզի  
Եղեգնուտի  
համայնքապետարան  
Աշխատակազմի գլխավոր  
մասնագետ  
(27/15) միավոր



**Չուշան Աբրահամյան**  
Սարովասանի  
համայնքապետարան  
Առաջատար  
մասնագետ՝ հաշվապահ  
(27/18) միավոր



**Սվելանա Գրիգորյան**  
«ԷՅ ԱՅ Թի Սի» ՍՊԸ  
Տնօրեն  
(27/14) միավոր



**Արմինե Մարտիրոսյան**  
«Զարարան Կապան» ՓԲԸ  
հաշվապահ  
(26/16) միավոր



**Նարիման Մանուկյան**  
«Մաճ Ի Ճճ» ՍՊԸ  
հաշվապահական խմբի  
ղեկավար  
(26/15) միավոր




**Լիլիտ Պիրոգովա**  
Լոռու մարզային  
հիգիենարդարանական  
դիսպահներ ՊՓԲԸ  
գլխավոր հաշվապահ  
(25/14) միավոր



**Արմինե Մուրադյան**  
Ղաեղի համայնքապետարան  
Առաջատար  
մասնագետ-հաշվապահ  
(24/14) միավոր



**Քրիստինա Ասատրյան**  
«ԷՅԱՅԹԻՍԻ» ՍՊԸ  
հաշվապահ  
(21/10) միավոր



**Խոկուիկ Մարգարյան**  
ՀՀ Գեղարքունիքի  
մարզի Լճաշենի  
համայնքապետարան  
Առաջատար  
մասնագետ-հաշվապահ  
(21/10) միավոր





Դադիվանակաների մայրաքաղաք

# YEREVAN FM 101.9

Հեռ.՝ (374 10) 55 10 12  
[www.yerevanfm.am](http://www.yerevanfm.am)

